Ազգ
Azg
26 ՅՈՒՆԻՍ 2012 ԵՐԵՔՇԱԲԹԻ 115(4967)
ISSN: 1829-1651

# Տեղի ունեցավ ՌԱԿ (Հայաստան) հանրապետական վարչության առաջին նիստը

Յունիսի 24-ին Երեւանի Թեքեյան կենտրոնում տեղի ունեցավ Ռամկավար ազատական կուսակցության նորընտիր վարչության առաջին նիստը, որի ընթացքում քննարկվեցին կուսակցությունների միավորումից հետո առկա խնդիրները եւ դրանց լուծման ուղիները: Մինչ վաչության նիստը տեղի էր ունեցել հանրապետական վարչության դիվանի հավաք, որը մշակել էր քննարկվող օրակարգը, որի կարեւորագույն հարցերից էր կազմակերպչական հարցը: Մասնավորապես կարեւորվեցին նախկին ՀՌԱԿ եւ Արմենական-ՌԱԿ մարզային կառույցների միավորման գործընթացը եւ կուսակցության անդամների ցուցակների ճշգրտումը: Կուսակցության վարչության աշխատանքի արդյունավետության բարձրացման համար որոշում ընդունվեց ստեղծել հանձնաժողովներ եւ դրանց աշխատանքների կազմակերպման պատասխանատուներ:

Ստեղծվեցին կազմակերպչական, Սփյուռքի ՌԱԿ կառույցների հետ աշխատանքի, լրատվության, ֆինանսատնտեսական, միջկուսակցական կապերի, գաղափարախոսական, մշակույթի եւ կուսակցության արխիվային փաստաթղթերի հարցերով հանձնաժողովներ: Վարչության նիստում քննարկվեց նաեւ կուսակցության գույքային վիճակը եւ որոշում ընդունվեց ձեռնարկել հնարավոր քայլերը ապօրինական կերպով օտարված գույքը հետ բերելու ուղղությամբ:

ՌԱԿ հանրապետական վարչությունը իր նիստում որոշում ընդունեց նաեւ ստեղծել վերկուսակցական մարմին՝ «Արմենական ատյաններ» պայմանական անունով:

Կուսակցության վարչության նիստի հաջորդ քննարկման թեման էր այս տարվա սեպտեմբերին Հայաստանի մարզերում սպասվող տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ) ընտրությունը: ՌԱԿ հանրապետական վարչությունը որոշում ընդունեց, որ կուսակցությունը պետք է ակտիվ մասնակցություն ունենա ՏԻՄ ընտրություններին, ինչի շուրջը տեղական եւ մարզային կառույցները պետք է նախապատրաստական աշխատանքներ կատարեն եւ իրենց թեկնածուներին ներկայացնեն հանրապետական վարչության հաստատմանը: Վարչությունը մասնավորապես որոշեց, որ կուսակցության մարզային բոլոր ակումբները եւ շրջանակները պետք է պարտադիր կերպով իրենց թեկնածուներին առաջադրեն ՏԻՄ ավագանիների ընտրություններին: Վարչության նիստի ժամանակ շեշտվեց, որ 2003-ից հետո առաջին անգամն է, որ Ռամկավար ազատական կուսակցությունը սկսում է նախապատրաստական աշխատանքներ Հայաստանում տեղի ունեցող ընտրություններին մասնակցելու համար: ՌԱԿ-ը որոշում ընդունեց իր կազմակերպչական ռեսուրսները ի մի բերել ՏԻՄ ընտրություններին ակտիվ կերպով մասնակցելու համար:

ՌԱԿ (ՀԱՅԱՍՏԱՆ)
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

# Բաքվի «Սուրբ անտեղյակությունը» եւ համանախագահների «ձկան» լռությունը

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

Ադրբեջանի ԱԳՆ խոսնակ Էլման Աբդուլլաեւը անոնսավորել է, որ ԵԱՀԿ Մխ համանախագահները տարածաշրջան «կայցելեն հուլիսին»: Նա, սակայն, իր շեֆից մի փոքր առաջ է անցել «անտեղյակության» մեջ եւ ասել, որ «օգտագործելով եւ պահպանելով «ադրբեջանական տարածքների օկուպացիան» (չակերտները մերն են-Վ. Ա.) Հայաստանը դեմ է գնում ՄԱԿ-ի Խարտիայում եւ Հելսինկյան եզրափակիչ ակտում հստակ արտացոլված՝ ուժի չկիրառման սկզբունքներին (՞- Վ. Ա.)»:

Միջազգային հարաբերություններում, իհարկե, պետությունների ինքնիշխանությունը հարգելի է: Բայց դա անսահման լինել չի կարող: Ի վերջո, գոյություն ունեն չափանիշներ, որոնց հանդեպ անհարգալի, Ադրբեջանի դեմքում՝ նենգափոխական, վերաբերմունքը պետք է արժանանա կտրուկ, միանշանակ, երկիմաստության տեղ չթողնող արձագանքի:

Սա արդեն այդ դեպքն է: Ադրբեջանի ԱԳՆ երիտասարդ, որ, ամենայն հավանականությամբ, մի քանի տարի առաջ դեռեւս ուսանող է եղել, խոսնակի «հիշողությունը թարմացնելու», թեեւ նման պատասխանատու պաշտոն զբաղեցնողը դրա կարիքը հաստատ չունի, նպատակով փորձենք հասկանալ, թե ո՞վ, ե՞րբ եւ ինչպե՞ս է ուժի դիմել: Խորհրդային տարիների մասին չենք խոսի: Այստեղ ադրբեջանական կողմը «մաքուր է»: Չէ՞ որ Մութալիբովը չի հրամայել, որպեսզի Կիրովաբադում տեղակայված խորհրդային բանակը այդ քաղաքի շրջակայքում «30-ից ավելի գյուղ հայերից ազատագրի», ինչպես բազմիցս հպարտությամբ ասել է Ադրբեջանի առաջին նախագահը:

Ադրբեջանը անկախության մեկնակետ է համարում 1991 հոկտեմբերի 18-ը: Այդ օրն է ընդունվել «Պետական անկախության հիմունքների մասին» սահմանադրական օրենքը: Նույն տարվա նոյեմբերի 26-ին Ադրբեջանի Գերագույն խորհուրդը ընդունել է «Ղարաբաղի լեռնային մասի ադրբեջանական բնակչության անվտանգությունն ապահովելու մասին», ի դեպ՝ առ այսօր չհրապարակված, գաղտնի պահվող, որոշում:

Տես էջ 2

# Հովվապետական այց Ֆրանսիա

Ինչպես տեղեկացնում է Մայր աթոռի մամլո դիվանը՝ հունիսի 28-ից հուլիսի 4-ը Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսը հովվապետական այցով կլինի Ֆրանսիայի հայոց թեմում՝ Մարսելում, ուր կհանդիսապետի Սրբոց Թարգմանչաց եկեղեցու օծման 80-ամյակին նվիրված միջոցառումները:

Մարսելում Նորին սրբությունը կմասնակցի նաեւ Հայ առաքելական եկեղեցու եվրոպական համագումարին, կունենա պաշտոնական հանդիպումներ քաղաքային իշխանությունների, ինչպես նաեւ Ֆրանսիայի թեմական եւ համայնքային կառույցների ներկայացուցիչների հետ:

Նորին սրբությանն ուղեկցելու են գավազանակիր Անանիա աբեղա Ծատուրյանը, կաթողիկոսական գրասենյակի քարտուղարներ Խորեն քահանա Կիրակոսյանը, Ադամ քահանա Մակարյանը եւ պրոֆեսոր Դավիթ Մուրադյանը:

Ս. Ս.

# Ամենայն հայոց կաթողիկոսն ընդունեց ՀԲԸՄ նախագահին

Մայր աթոռ Ս. Էջմիածնում Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսն ընդունել է Հայկական բարեգործական ընդհանուր միության նախագահ Պերճ Սեդրակյանին տիկնոջ՝ Վերա Սեդրակյանի ուղեկցությամբ:



Ողջունելով ՀԲԸՄ նախագահի այցը՝ Վեհափառ հայրապետն իր օրհնությունն ու գնահատանքն է հայտնել ՀԲԸՄ անդամներին Մայր աթոռ Ս. Էջմիածնի հանդեպ շարունակ ցուցաբերվող նվիրումի եւ աջակցության համար:

Զրույցի ընթացքում անդրադարձ է կատարվել Սփյուռքում ու Հայրենիքում ՀԲԸ Միության ջանքերով իրականացվող ազգանպաստ գործունեությանը, ինչպես նաեւ Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու հետ համատեղ իրականացվող ծրագրերին:

Հանդիպման ընթացքում քննարկվել են նաեւ ազգային-եկեղեցական կյանքում առկա զանազան խնդիրներ եւ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումներին առնչվող հարցեր:

Ամենայն հայոց հայրապետը ողջունել է նաեւ ՀԲԸ Միության 87-րդ ընդհանուր անդամական ժողովը մայր հայրենիքում գումարելու որոշումը, որը կայանալու է հոկտեմբերի 20-ին Մայր աթոռ Ս. Էջմիածնի «Վաչե եւ Թամար Մանուկյան» Մատենադարանի դահլիճում:

Հանդիպումից հետո տեր եւ տիկին Պերճ եւ Վերա Սեդրակյանները ծանոթացել են Ս. Էջմիածնում ընթացող լայնածավալ շինարարական, այդ թվում՝ Սեդրակյան ամուսինների ազնիվ բարերարությամբ իրականացվող հին վեհարանի հիմնանորոգության եւ վերակառուցման աշխատանքներին:

# Ավստրիայի նախագահի առաջին պաշտոնական այցը Երեւան

MԱԿ-ի Անվտանգության խորհրդի ոչ մշտական անդամ Ադրբեջանի կողմից Ղարաբաղի խնդրով ռազմատենչ հռետորաբանության առնչությամբ Ավստրիան հստակորեն կողմ է հակամարտության խաղաղ կարգավորմանը: Այդ մասին այսօր արդեն Հայաստանում գտնվող Ավստրիայի նախագահ Հայնց Ֆիշերը հայտարարել է «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթին տված հարցազրույցում՝ մինչ Երեւան ժամանելը:



«Հակամարտության կողմերին այդ առումով հորդորվում է վստահության եւ անվտանգության կառուցման հստակ միջոցներ ձեռնարկել: Հակամարտության լուծումը կարող է նաեւ Հարավային Կովկասի բոլոր երկրների բարելավված համագործակցության համար ճանապարհ բացել», նշել է Ֆիշերը՝ հայ-ադրբեջանական սահմանին ու շփման գծում հրադադարի խախտման միջադեպերի առնչությամբ էլ ավելացնելով, որ Ավստրիան մեծապես մտահոգված է շփման գծում միջադեպերի տեւականությամբ: «Դիտուկահարների հետքաշումը եւ սահմանային միջադեպերի հետաքննության մեխանիզմներն անհրաժեշտ են՝ մոտենալու հակամարտության կարգավորմանը», շեշտել է Ֆիշերը:

Տես էջ 3

# «Միջադեպը չի դառնա պատերազմի պատճառ, սակայն անպատիժ էլ չի մնալու»

## *Հայտարարել է Անկարան Սիրիայում թուրքական ինքնաթիռի կործանման առնչությամբ*

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

Ժողովրդական ասացվածքի համաձայն՝ «Փորձը փորձանք չէ»: Սակայն, երբ պետություններից մեկը ռազմական ինքնաթիռով փորձում է ստուգել մյուսի հակաօդային պաշտպանության համակարգի ռադարային կայանի զգոնությունը, փորձն արդեն փորձանք է դառնում:

Խոսքը թուրքական ռազմաօդային ուժերի հետախուզական ինքնաթիռի մասին է, որը հունիսի 22-ին ներխուժելով Սիրիա, շուրջ 15 րոպե, մինչեւ խոցվելը, թռչում էր սիրիական օդային տարածքով: Խոցված թուրքական ինքնաթիռը խորտակվել է սիրիական ջրերում, դեռեւս շարունակվում են ինքնաթիռի եւ օդաչուների որոնման աշխատանքները:

Այս միջադեպը լայն արձագանք է գտել ինչպես Թուրքիայում, այնպես էլ նրա սահմաններից դուրս: ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Քլինթոնը ինքնաթիռի կործանումը վերագրեց Սիրիայի ամբարտավանությանը, համարելով անընդունելի: Չինաստանի արտգործնախարարությունը ողջամտության կոչ արեց կողմերին, որ հնարավոր լինի կանխել լարվածության հետագա սրումը: Ֆրանսիայի արտգործնախարար Լորան Ֆաբիուսը անհանդուրժողականության համար դատապարտեց սիրիական կողմին, թե թուրքական ինքնաթիռը հագեցված չէր հրթիռներով, ուսումնավարժական թռիչք էր իրականացնում: Նրան միացավ Իտալիայի արտգործնախարարությունը, իսկ Իսլամական համագործակցություն կազմակերպության արտգործնախարարները կազմակերպությանը կոչ արեցին սառեցնել Սիրիայի անդամակցությունը:

Թուրքական ինքնաթիռը վայր գցելու հարցն այսօր Լյուքսեմբուրգում կքննարկի Եվրոմիության արտգործնախարարների խորհրդակցությունը: Վաղը Թուրքիայի պահանջով կգումարվի ՆԱՏO-ի անդամ-երկրների արտակարգ նիստ: Թուրքիան պատրաստվում է հարցը բարձրացնել ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում, իհարկե նախապես իմանալով, որ այնտեղ միջադեպի առնչությամբ հակասիրիական որեւէ որոշում չի ընդունվելու:

Տես էջ 5

# Չավուշօղլուի ջանքերի զոհ արդյունքը

## ԵԽԽՎ նախագահ Ժան-Կլոդ Մինյոնը հակված է վստահելու Մինսկի խմբին

Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի ղարաբաղյան հարցով ժամանակավոր հանձնաժողովի աշխատանքները, որ 2011-ին ԵԽԽՎ-ում նախագահող թուրք Մեւլութ Չավուշօղլուի ջանքերով որոշվել էր վերականգնել՝ չնայած հայաստանյան պատվիրակության բոյկոտին, մոտ ապագայում դեռեւս վերակենդանացվելու հեռանկար չունեն: Ինչպես դեռեւս ԵԽԽՎ հունվարյան նստաշրջանի ավարտին վեհաժողովի բյուրոյի նիստից հետո հայտարարել էր ներկայումս ԵԽԽՎ-ն նախագահող Ժան-Կլոդ Մինյոնը, այն ժամանակ որոշում էր կայացվել հարցը բազմակողմանի քննարկել հնարավոր բոլոր հարթակներում, նաեւ խորհրդակցություններ ունենալ վեհաժողովում հայաստանյան ու ադրբեջանական պատվիրակությունների ղեկավարների հետ:



Երեկ Ստրասբուրգում մեկնարկած ԵԽԽՎ ամառային նստաշրջանին ընդառաջ ասուլիսում Մինյոնը փաստացի հաստատեց, որ հանձնաժողովը առայժմ չի գործելու: Թեեւ Մինյոնը քանիցս շեշտեց, որ տվյալ պահին ներկայացնում է իր անձնական կարծիքը, այդուհանդերձ, ԵԽԽՎ նախագահի խոսքով՝ «հակված եմ վստահելու Մինսկի խմբին», չնայած վերջինս «պետք է ավելի գործուն լինի»:

Մինյոնը նշեց, որ յուրաքանչյուր նստաշրջանից առաջ տեղի ունեցող բյուրոյի նիստում այս անգամ որեւէ անդրադարձ չի եղել այս հարցին, միեւնույն ժամանակ ավելացնելով, որ հարցի առնչությամբ վերջնական որոշում կկայացնի ԵԽԽՎ բյուրոն: Իսկ մինչ այդ Մինյոնը կհանդիպի ու կխորհրդակցի վեհաժողովում Հայաստանի ու Ադրբեջանի պատվիրակությունների ղեկավարների հետ, ընդ որում, հայկական պատվիրակության պարագայում քննարկման առարկա կլինի նաեւ մայիսի 6-ի ընտրությունների առնչությամբ ԵԽԽՎ զեկույցը, որը, հիշեցնենք, մայիսի 24-ին Տիրանայում քննարկվել էր ԵԽԽՎ մշտական հանձնաժողովի նիստում ու նաեւ «կողմնակալ ու անարդար» էր որակվել վեհաժողովում հայաստանյան պատվիրակության ղեկավար Դավիթ Հարությունյանի կողմից:

Վեհաժողովի ֆրանսիացի նախագահի ներկայացմամբ՝ հիմք չկա «բազմապատկելու այն կառույցների թիվը, որոնք զբաղվում են ղարաբաղյան հարցով»: «Որեւէ նոր կառույց, նոր հարթակ միայն խառնաշփոթ կստեղծի», նշեց Ժան-Կլոդ Մինյոնը, անձնապես վստահ լինելով, որ Մինսկի խմբի ձեւաչափով կարելի է հասնել հարցի կարգավորմանը:

Ասուլիսի ընթացքում Մինյոնը, ի շարս այլ հարցերի պատասխանների, անդրադարձավ նաեւ ԵԽԽՎ-ում Ադրբեջանի հարցով պատրաստվող զեկույցին, ինչպես նաեւ զեկուցող Պեդրո Ագրամունտին փոխելու առնչությամբ ադրբեջանական ընդդիմության նամակին: Մինյոնը նախ տեղեկացրեց, որ նման բովանդակությամբ նամակ ինքը չի ստացել, իսկ ընդհանուր առմամբ՝ Ադրբեջանի առնչությամբ զեկույցը վեհաժողովական հարթակում կքննարկվի շուտով, քանի որ «հնարավոր չէ առաջ գնալ, երբ Ադրբեջանում մարդու իրավունքները չեն հարգվում, ինչպես հարկն է»:

Միեւնույն ժամանակ, Մինյոնը հատուկ անդրադարձավ Ադրբեջանում լրագրողների վիճակին, շեշտելով, որ եվրոպական կառույցները, այդ թվում՝ Եվրոպայի խորհուրդն ու ԵԽԽՎ-ն, կաշխատեն այդ ուղղությամբ, քանի որ «լրագրողների բանտարկությունները կամ խոշտանգումները անընդունելի են»:

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**



# Սահմանային միջադեպերի հարցը կբարձրացվի Ստրասբուրգում

**Եվրոպական ատյաններում բոլոր առիթներով սեփական մոտեցումների մասին բարձրաձայնելու ադրբեջանական մոտեցումը հատկապես ակնառու դրսեւորումներ է ունենում խորհրդարանական ձեւաչափերում, ինչպիսին է նաեւ Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովը: Սակայն, պարզվում է, միշտ չէ, որ ադրբեջանական ակնկալիքները կարող են արդարանալ, ուստի երբեմն էլ վեհաժողովում Ադրբեջանի պատվիրակները նախընտրում են լռել: Ցանկալի լիներ՝ այսպիսի ողջախոհություն ամեն հարցում տեսնել, սակայն, ցանկություն ասվածն ու քաղաքականությունը տվյալ դեպքում առնչություն չունեն:**

**Ստրասբուրգում երեկ մեկնարկած վեհաժողովի ամառային նստաշրջանի առաջին հյուրը Ալբանիայի վարչապետ Սալի Բերիշան էր, որի ներկայացրած երկիրը այս ժամանակահատվածում նախագահում է ԵԽ Նախարարների կոմիտեն: Բերիշային հարց ուղղելու հերթագրվածների մեջ ադրբեջանցի պատվիրակ չկար, ինչը այնքան հաճախ պատահող երեւույթ չէ: Այդուհանդերձ, հարց հնչեցրեց Հայաստանյան պատվիրակության ներկայացուցիչ Նաիրա Զոհրաբյանը (նրա հետ Ստրասբուրգ են մեկնել նաեւ Արմեն Ռուստամյանը, Հերմինե Նաղդալյանը, Զարուհի Փոստանջյանը, պատվիրակության ղեկավար Դավիթ Հարությունյանը):**

**Զոհրաբյանը հետաքրքրվեց, թե արդյոք Ալբանիայի նախագահության օրոք հնարավո՞ր է երկխոսության հասնել Ադրբեջանի ու Լեռնային Ղարաբաղի միջեւ: Բերիշան կամ չցանկացավ պատասխանել հարցին, կամ Զոհրաբյանի ֆրանսերեն հնչեցված հարցին անգլերեն պատասխանում առաջնորդվեց ոչ ճիշտ թարգմանությամբ, քանի որ սկսեց խոսել Կոսովոյի օրինակից, ընդգծելով, թե այդ հարցում Եվրոպայի խորհրդի ու մյուս եվրոպական կառույցների հետ աշխատանքը մեծ կարեւորություն ունի: Այդուհանդերձ, հետաքրքրական էր, որ Բերիշան կոչ արեց բոլոր կողմերին ընդունել «իրավիճակի ունիվերսալությունը», եզրափակելով, թե ազգային փոքրամասնությունների իրավունքները պետք է հարգվեն, ինչը, նրա խոսքով, արվում է Ալբանիայում:**

**Դժվար է ասել, թե ինչ նկատի ուներ Ալբանիայի վարչապետը: Նաիրա Զոհրաբյանը «Ա1+»-ին կարծիք է հայտնել, թե, այդուամենայնիվ, հարցը սխալ էր թարգմանվել, քանի որ Սալի Բերիշան պատասխանել է նաեւ, թե կիսում է Նախարարների կոմիտեի տեսակետը, մինչդեռ այդպիսի տեսակետ, ըստ Զոհրաբյանի, չկա:**

**Վեհաժողովի այս նստաշրջանի օրակարգում Հայաստանին ուղղակիորեն առնչվող որեւէ հարց չկա, թեեւ, ինչպես մինչեւ Ստրասբուրգ մեկնելը «panorama.am»-ին հայտնել էր Զոհրաբյանը, «բոլոր խնդիրներն ու նախաձեռնությունները, որոնք քննարկվում են ԵԽԽՎ-ում, առնչվում են Հայաստանին»: Հայաստանյան պատվիրակը տեղեկացրել էր, որ ինքը բարձրաձայնելու է վերջին շրջանում Ադրբեջանի կողմից սահմանագծում ագրեսիվ գործողությունների մասին, երբ եղել են բազմաթիվ անմեղ զոհեր: Ակնհայտորեն, այս առնչությամբ իրենց նախաձեռնությունները չեն ուշացնի նաեւ ադրբեջանցի պատվիրակները, առնվազն՝ ԵԽԽվ-ում շրջանառության մեջ դրվող հայտարարությունների տեսքով, որոնց տակ միշտ կարողանում են բավարար քանակությամբ ստորագրություններ հավաքել ադրբեջանցի+թուրք պատգամավորների քանակով ու մեկ-երկու ադրբեջանամետ պատվիրակներով:**

**Զոհրաբյանը նշել էր նաեւ, որ, չնայած հայաստանյան պատվիրակության հայտարարած մորատորիումին (որի շրջանակներում հայկական կողմը վեհաժողովում չէր բարձրացնում Ադրբեջանի ներքին կյանքին վերաբերող հարցեր), ինքը պատրաստվում է, օրինակ, պահանջել փորձաքննության ենթարկել ադրբեջանական դասագրքերը:**

**Ա. Հ.**

# Բաքվի «Սուրբ անտեղյակությունը» եւ համանախագահների «ձկան» լռությունը

*1-ին էջից*

Դրա կատարման պատասխանատվությունը վերապահվել է Ադրբեջանի պաշտպանության եւ ներքին գործերի նախարարություններին:

Իրեն եւ միջազգային իրավունքը հարգող պետությունը նման ռասիստական որոշում ընդունել չէր կարող: Իմաստով եւ գործնականում դա նշանակում է, որ, անկախություն հռչակելով Ադրբեջանը Լեռնային Ղարաբաղի բնակչության ջախջախիչ մեծամասնություն կազմող հայությանը հայտարարել է օրենքից եւ պետական հոգածությունից դուրս: Իրավական տեսակետից այդ որոշումը հավասարազոր է նրան, որ Ադրբեջանը քաղաքացիությունից զրկել է 150 000 հայի:

Ադրբեջանական կողմի լկտիությունը այնքան է ակնհայտ, որ, օրինակ, Խոջալուի մասին խոսելիս ասվում է, թե ««քաղաքում» չկար գազ, էլեկտրականություն, ջուր»: Տպավորություն է ստեղծվում, թե «հայերն էին Խոջալուն ենթարկել պաշարման»: Մինչդեռ ողջ Լեռնային Ղարաբաղը գազ, էլեկտրականություն ստանում էր Ադրբեջանից: Իսկ վերջինս դրանք անջատել էր: Բացառությամբ Շուշիի, որտեղ հոսանք մատակարարվում էր շրջանցիկ էլեկտրահոսքագծով:

1991-92թթ. ձմռանը Ստեփանակերտը հիշեցնում էր ֆաշիստների կողմից պաշարված Լենինգրադը, որտեղ ամեն օր սովից, hrետակոծություններից եւ մարտական օդուժի հարձակումներից տասնյակ խաղաղ բնակիչ էր զոհվում: Ադրբեջանի նախագահ Էլչիբեյն էր հոխորտում, որ «բոլոր ղարաբաղցի հայերին հավաքել է տոպրակի մեջ, մնում է փակել», նա էր, որ երդվել էր «ոտքերը Սեւանում լվանալ»:

Այսքանից հետո խոսել «Հայաստանի կողմից ուժի կիրառման» մասին եւ չարժանանալ միջնորդների հակազդեցությա՞նը: Ինչի՞ վրա է շեշտը դնում Ադրբեջանի ԱԳՆ խոսնակը: «Այն, որ Ադրբեջանի ռազմական բյուջեն մի քանի անգամ (՞- Վ. Ա.) գերազանցում է Հայաստանի ողջ բյուջեն, խոսում է հաջողված քաղաքականության մասին»: Տեսնո՞ւմ եք: Նույն պատկերն է, ինչ որ 20 տարի առաջ: Հանգուցյալ Էլչիբեյը «Սեւանում ոտք լվանալու» սպառնալիք էր հնչեցնում, Ադրբեջանի այսօրվա «գենշտաբը»՝ որ «10 օրվա մեջ դուրս կգան հայ-իրանական պետական սահման»:

Խնդիրն սպառնալիքը չէ, այլ համանախագահների «ձկան» լռությունը: Խնդրեմ, Փարիզում հունիսի 18-ին կայացած բանակցություններից հետո Ադրբեջանի ԱԳՆ-ն հրապարակում է, որ «մեր տեսակետը մնում է անփոփոխ, մենք գտնում ենք, որ հակամարտության կարգավորման պրոբլեմի հիմքում կանգնած է (խոսքի «թռիչքին» նայեք- Վ. Ա.) Հայաստանի զինված ուժերի (՞- Վ.Ա.) տեղակայումը Ադրբեջանի «տարածքներում» (չակերտները մերն են- Վ. Ա.), եւ դրանց դուրսբերումը հնարավորություն կբացի, որ հակամարտությունը հետագայում կարգավորվի»:

Մի դեպքում չկարգավորվելու «հիմքում կանգնած է Հայաստանի զինված ուժերի տեղակայումը», մյուսում՝ «դրանց դուրսբերումը հնարավորություն կբացի, որ հակամարտությունը հետագայում լուծվի՞»: ԼՂՀ պաշտպանության բանակի առաջապահ ստորաբաժանումները կանգնած են այնտեղ, որտեղ էին 1994թ. մայիսի 12-ին: Իսկ նրանք այդտեղ հասել են՝ մշտապես հակազդելով ադրբեջանական բանակի ագրեսիային: Մշտապես: Ի դեպ, դա շատ հստակ արձանագրված է ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 3-րդ բանաձեւում: Էլմար Աբդուլլաեւը թող կարդա եւ, եթե կարող է, հասկանա, որ երբ ասվում է, որ կողմերից մեկը մշտապես խախտում է հրադադարը, իսկ մյուսը՝ հակազդելով դրան, նոր տարածքներ վերցնում վերահսկողության տակ, ապա դիվանագիտորեն ձեւակերպվում է այն, ինչ տեղի է ունենում ճակատային գծում:

Կատարյալ հիմարություն է ասել, որ շփման գծում «միջադեպեր չեն լինի, եթե այնտեղ չլինի «Հայաստանի» բանակը»: Եթե բանակներից մեկը «չլինի», առհասարակ ի՞նչ շփման գծի մասին է խոսքը: Շփման գիծը հենց երկու՝ Ադրբեջանի եւ ԼՂՀ զինված ուժերի առաջապահ ստորաբաժանումների «ֆիզիկական շփման» գիծն է, խրամատը, որ բաժանում է հակամարտ կողմերի զինվորներին: Եվ ասել, որ «միջադեպեր տեղի են ունենում, քանի որ «Հայաստանի» բանակը «ադրբեջանական տարածքներում է» եւ չի հեռանում», նշանակում է ընդունել, որ միջադեպերը հրահրվում են, որպեսզի «մյուս բանակը հեռանա»: Այսինքն, դա նույն ուժի կիրառումն է:

Եթե իրոք հուլիսին համանախագահները գալու են տարածաշրջան, եթե նրանք շահագրգռված են, որ հակամարտությունը կարգավորվի բացառապես խաղաղ բանակցությունների ճանապարհով, ապա պետք է հստակ հայտարարեն, որ Ադրբեջանի «սուրբ անտեղյակությունը» իրավիճակը նենգափոխելու եւ միջազգային հանրությանը մոլորեցնելու, ստանձնած պարտավորությունները չհարգելու եւ տարածաշրջանը նոր, ավելի լայնածավալ եւ հետեւանքներով անկանխատեսելի պատերազմի մեջ ներքաշելու փորձ է: Հակառակ դեպքում հարկ կլինի ցավով արձանագրել, որ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների «ձկան» լռությունը «տարածաշրջանը պայթեցնելու անուղղակի հորդոր է» Ադրբեջանին:


«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*** / հեռ 529353

Համակարգչային շարուածքը
«Ազգ» թերթի


Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:


"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Անցուդարձ

## «Ընդդիմությունը նեղսրտած էր, նեղացած...»

«Ընդդիմությունը նրա համար է, որ քննադատի, իշխանությունն էլ պետք է հանդուրժող լինի, լսի եւ եզրակացություն անի» թեզը ՀՀԿ խմբակցության ղեկավար **Գալուստ Սահակյանինն** է: Նրա ներկայացմամբ՝ այս գումարման խորհրդարանը տարբերակիչ գծեր ունի. քաղաքականությամբ զբաղվողները շատ են: Սահակյանը դրանում համոզվեց ԱԺ արտահերթ նիստի եւ կառավարության ծրագրի քննարկման ժամանակ: «Խորհրդարանը դառնում է դեբատների վայր, ինչը հանրապետական պատգամավորը շատ է կարեւորում:

Նա կողմ է, երբ ընդդիմությունը քննադատում է երեւույթները, սակայն բացառում է անձնավորված քննադատությունը: Սահակյանը դրական է գնահատում նախկին կոալիցիոն գործընկեր ԲՀԿ-ի բռնած դիրքը: «ԲՀԿ-ն խորհրդարանական կյանքում նոր բնորոշիչ բերեց», ասում է Սահակյանը՝ հավելելով, որ ԲՀԿ-ն ԱԺ-ում կընդունի այն օրենքները, որոնք համահունչ են իր ռազմավարությանը, հակառակ պարագայում ԲՀԿ-ն կքննադատի, ինչին հարկավոր է նորմալ վերաբերվել: Սահակյանը համոզված է, որ ԱԺ-ում կառավարության ծրագիրը քննադատվեց ոչ թե այն պատճառով, որ վատն էր կամ ոչ իրատեսական, այլ քաղաքական ուժերը նեղսրտած էին, գուցե նաեւ նեղացած: «Կառավարության ծրագիրը չկարդացած, նրանք արդեն գիտեին, որ դեմ են: Սա ոչ թե ծրագրի քննադատություն էր, այլ ակցիա էր գործող իշխանությունների դեմ:

«Ժառանգություն» խմբակցության ղեկավար **Ռուբեն Հակոբյանն** էլ կառավարության հնգամյա գործունեության ծրագրի քննարկումը համարում է լուրջ եւ համակողմանի: Ժառանգությունը դեմ է քվեարկել ոչ թե կառավարությանը, այլ՝ ծրագրին: Ժառանգականները կառավարության ծրագիրը քննարկելիս հաշվի են առել երեք կետ՝ ինչքանո՞վ է իրատեսական, առկա՞ են այն մեխանիզմները, որոնց միջոցով պետք է իրականացվի եւ ինչքանո՞վ է պետությունը կենսական տարածք ստեղծում ծրագրերի իրականացման համար: Ժառանգականները կետերից որեւէ մեկի պատասխանը ծրագրում ամբողջական դրույթով չեն գտել եւ կառավարության ծրագրին դեմ են քվեարկել հետեւյալ գիտակցությամբ՝ «Հանուն պետականության, ոչ թե՝ ընդդեմ իշխանության»:

Ռուբեն Հակոբյանը շեշտում է, որ 20 տարվա ընթացքում միակ բանը, որ կառավարությունները կարողացել են ստեղծել, կոռուպցիոն համակարգն է: Անհնար է խոսել որեւէ ծրագրի մասին, քանի դեռ կոռուպցիայի դեմն առնել չի լինում: Կոռուպցիան ձեւավորվում է իշխանական խոհանոցում, ստվերային շուկան է: Քանի դեռ չենք հասկացել, որ համակարգն է այդպիսին՝ որեւէ ծրագիր այս պարագայում իմաստ չունի, չենք հասնի հաջողության», ասաց Հակոբյանը՝ հավելելով, որ ապագային ուզում է լավատեսորեն նայել: Նրա ներկայացմամբ՝ իշխանությունները վախենում են փոքր հնարավորություն տալ ընդդիմությանը, որովհետեւ վախենում են, որ ընդդիմադիրները կտեսնեն, թե ինչ է կատարվում այդ խոհանոցում:

Հ. Հ.

## Գույքի գրանցումը նաեւ e-cadastre.am-ից

### *Կադաստրի կոմիտեի նախագահի խորհրդականը կոչ է անում նախապատվությունը տալ էլեկտրոնային տարբերակին*

Անշարժ գույքի կադաստրի համակարգում այս տարվանից կատարվեցին մի շարք փոփոխություններ, որոնք կոչված էին էապես հեշտացնելու քաղաքացիների սպասարկումը եւ գույքի գրանցման բոլոր գործընթացները: Թե ինչպիսի՞ն են այդ բարեփոխումների արդյունքները, որոշեցինք տեղեկանալ կադաստրի կոմիտեի նախագահի խորհրդական Խաժակ Կարայանից: Նա մեզ նախ ներկայացրեց այս տարվա սկզբից մինչեւ հունիս արձանագրված ցուցանիշները:

Երբ կադաստրի համակարգում, տարածքային ստորաբաժանումների փոխարեն, քաղաքացիների համար ստեղծվեցին սպասարկման գրասենյակներ եւ հնարավոր եղավ գույքը գրանցել դրանցից ցանկացածում՝ անկախ գույքի գտնվելու վայրից, ըստ Խաժակ Կարայանի, մարզերում գտնվող գույքի վերաբերյալ արդեն մոտ 6000 դիմումներ են ընդունվել Երեւանի գրասենյակներում եւ 726 դիմում՝ մարզերի սպասարկման գրասենյակներում՝ Երեւանում գտնվող գույքի վերաբերյալ:

Նոր համակարգի առավելությունն, ըստ կոմիտեի նախագահի խորհրդականի, այն է, որ ամեն մարդ իր գույքի հետ կապված դիմում կարող է տալ ցանկացած գրասենյակում, առանց ավելորդ ժամանակ եւ միջոցներ ծախսելու իր գույքի գտնվելու վայրի տարածքային ստորաբաժանում հասնելու համար: Նույն կերպ նաեւ նա հնարավորություն ունի իր դիմումի պատասխանը ստանալ ցանկացած սպասարկման գրասենյակից:

Խաժակ Կարայանը տեղեկացրեց, որ Երեւանում կան 5 սպասարկման կենտրոններ՝ Կենտրոն, Արաբկիր, Էրեբունի, Շենգավիթ եւ Նոր Նորք: Մեր այն հարցին, թե արդյո՞ք Կենտրոնի գրասենյակում շատ չեն ավելացել դիմումները հակառակ մյուս գրասենյակների, մեր զրուցակիցը բացասական պատասխանեց, ասելով, որ դիմումատուների քանակը շատ չի ավելացել եւ դիմումների ու դրանց պատասխանների հետ կապված կուտակումներ չեն լինում: Նա նաեւ տեղեկացրեց, որ արդեն մոտ 5 հազար պարզ գործարքներ են կնքվել առանց նոտարական վավերացման: Այդուհանդերձ, Խաժակ Կարայանը խորհուրդ տվեց օգտվել դիմումների ներկայացման էլեկտրոնային տարբերակից:

e-cadastre.am էջի միջոցով նման հնարավորություն կա, երբ մարդ, առանց որեւէ գրասենյակ գնալու, կարող է տալ իր դիմումը, ստանալ պատասխան, գրանցել գույքը: Կադաստրի կոմիտեի նախագահի խորհրդականի հավաստիացմամբ, էլեկտրոնային համակարգը շատ հեշտ է գործածելը, ֆայլերը հերթականությամբ նշվում են, եւ համակարգչից օգտվել իմացողների համար դա դժվար չէ: Նա կոչ արեց նախապատվությունը տալ էլեկտրոնային տարբերակին, որն ավելի է հեշտացնում թե՛ այցելուի, թե՛ համակարգի աշխատակիցների գործը:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

## Ավստրիայի նախագահի առաջին պաշտոնական այցը Երեւան

*1-ին էջից*

Պաշտոնական հաղորդագրության համաձայն, Ավստրիայի նախագահը Երեւան է ժամանել պաշտոնական այցով երեկ, տիկնոջ՝ Մարգիթ Ֆիշերի հետ: Այցի շրջանակներում Ավստրիայի նախագահը հանդիպումներ կունենա նախագահ Սերժ Սարգսյանի, Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդի, ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանի եւ վարչապետ Տիգրան Սարգսյանի հետ: Հայաստանի եւ Ավստրիայի նախագահները կմասնակցեն նաեւ Հայ-ավստրիական գործարար համաժողովին:

Թեեւ պաշտոնական հաղորդագրությամբ այցելության ժամկետը չի նշվում, բայց Ավստրիայի նախագահի մակարդակով այս առաջին այցելությամբ Ֆիշերը Հայաստանում կլինի հունիսի 25-27-ը: Ավստրիայի նախագահը կլինի Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը հավերժացնող Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում, Մատենադարանում, Երեւանի ավստրիական գրադարանում, Էջմիածնում եւ այլն:

Ավստրիայի նախագահի հարցազրույցի համաձայն՝ հայ-ավստրիական հարաբերությունները գերազանց վիճակում են ու զարգացնելու ներուժ կա: Տնտեսական հետաքրքրությունների առումով Ֆիշերը «խոստումնալից հնարավորություններ» է գնահատել նախ եւ առաջ գյուղատնտեսության, սննդի արդյունաբերության, էլեկտրաարդյունաբերության, այլընտրանքային էներգիայի եւ տուրիզմի ոլորտներում:

Ինչ վերաբերում է հայ-թուրքական հարաբերություններին ու դրանց կարեւորմանը ԵՄ-Թուրքիա համատեքստում, ապա Ֆիշերը Հայաստանի եւ Թուրքիայի հարաբերությունների կարգավորման զույգ արձանագրությունների վավերացման դադարեցման առնչությամբ ափսոսացել է ու հույս հայտնել, որ երկարամյա այս խնդիրը համապարփակ ձեւով կարող է կարգավորվել:

Ա. Հ.



## ԱՄՆ քարտուղար Արթուր Բաղդասարյանն ընդունել է Նիկոլայ Բորդյուժային

**ԱԱԽ քարտուղար Արթուր Բաղդասարյանի հրավերով Երեւանում է Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության գլխավոր քարտուղար Նիկոլայ Բորդյուժայի գլխավորած պատվիրակությունը:**

**Երեկ ՀԱՊԿ գլխավոր քարտուղարին է ընդունել ԱԱԽ քարտուղար Արթուր Բաղդասարյանը: Հանդիպման ընթացքում կողմերը քննարկել են Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության շրջանակում 2012թ. սեպտեմբերին Հայաստանի Հանրապետության տարածքում «Փոխգործակցություն-2012» համատեղ զորավարժության նախապատրաստմանը եւ անցկացմանը, ինչպես նաեւ Հայաստան-ՀԱՊԿ համագործակցության ընթացքին վերաբերող այլ հարցերի լայն շրջանակ:**

**Զորավարժությունը կազմակերպվելու է Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության անդամ պետությունների զինված ուժերի համատեղ օպերատիվ եւ մարտական պատրաստության 2012թ. ծրագրի շրջանակներում:**

**Զրուցակիցները մտքեր են փոխանակել նաեւ տարածաշրջանային եւ միջազգային իրադրությանն առնչվող հարցերի վերաբերյալ:**

## Ռումինիայում ՀՀ դեսպան Հ. Գասպարյանի այցելությունը պատմական Արմենոպոլիս (Գեռլա) քաղաք

**Հունիսի 22-23-ին Ռումինիայում ՀՀ դեսպան Համլետ Գասպարյանն այցելեց Տրանսիլվանիայի Գեռլա, պատմական Արմենոպոլիս քաղաք, որտեղ հանդիպում ունեցավ նորընտիր քաղաքապետ Մարիուս Սաբոյի հետ, տեղի Սուրբ Երրորդություն հայ կաթողիկե տաճարում ներկա եղավ Գրիգոր Լուսավորչի հիշատակին նվիրված Սուրբ պատարագին, ինչպես նաեւ մասնակցեց մշակութային միջոցառումների:**

**Հունիսի 23-ի առավոտյան քաղաքապետարանում ծավալված զրույցին, որին մասնակցում էին նաեւ Ռումինիայի Հայոց թեմի առաջնորդ Տ. Դաթեւ եպս. Հակոբյանը, Ռումինիայի խորհրդարանի ազգային փոքրամասնությունների խմբի ղեկավար, Ռումինահայոց միության փոխնախագահ Վարուժան Փամբուկչյանը, ՌՀՄ գլխավոր քարտուղար Պերճ Մարգարյանը, ՌՀՄ Գեռլայի մասնաճյուղի նախագահ Յանոշ Էստեգարը, Բուխարեստի «Արարատ» հրատարակչության տնօրեն Սիրուն Թերզյանը եւ առաջնորդական փոխանորդ Եզրաս քահանա Բոգդանը, մտքեր փոխանակվեցին Գեռլա քաղաքում հայկական մշակութային հարուստ ժառանգության պահպանման եւ Հայաստանի հետ կապերի հաստատման մասին: Երկուստեք նշվեց, որ ինչպես Գեռլայում, այնպես էլ Ռումինիայի բազմաթիվ քաղաքներում հայերի դարավոր ներկայությունը, նրանց մատուցած արժեքավոր ծառայությունները ռումին պետությանը եւ ժողովրդին, համատեղ ապրելու փորձը, միմյանց ճանաչողությունը եւ փոխադարձ համակրանքը ամուր հիմք են ստեղծում առավել սերտացնելու հայ-ռումինական բարեկամությունը եւ համագործակցությունը բոլոր ոլորտներում:**



**Այնուհետեւ հանդիպման մասնակիցները, ինչպես նաեւ ռումին սենատորներ, Կլուժի նահանգային եւ տեղական իշխանությունների ներկայացուցիչներ Գեռլայի Սուրբ Երրորդություն հայ կաթողիկե տաճարում ներկա եղան Սուրբ Գրիգոր Լուսավորչին նվիրված ժամերգությանը:**

**Գեռլայում դեսպան Համլետ Գասպարյանը հարցազրույցներ տվեց ռումինական TVR1 կենտրոնական հեռուստատեսությանը:**

## Բարոյականության կոչ՝ ԶԼՄ-ներին

**Հարգելի ԶԼՄ աշխատակիցներ, ես 20.06-ին Կիեւյան կամրջի տակ հայտնաբերված 22-ամյա երիտասարդի՝ Ներսես Հակոբյանի ավագ քույրն եմ: Շնորհակալություն եմ հայտնում ձեզ բոլորիդ օպերատիվ եւ ճշգրիտ տեղեկատվության տրամադրման համար, դուք հնարավոր բոլոր եղանակներով անսահման ցավ պատճառեցիք հանգուցյալի ընտանիքի անդամներին: Ամենայն հարգանքով մոտենալով ձեր մասնագիտական պարտականություններին՝ խնդրում եմ հնարավորին սեղմ ժամկետներում կարգի հրավիրել ձեր կայքերը եւ եղբորս մահվան մասին տեղեկատվությունը դարձնել այնպիսին, որ նրա հարազատները կարդալուց կաթվածահար չլինեն: Ես չեմ ուզում, որ իմ ճարահատյալ մայրը որոշ ժամանակ անց ինտերնետում տեսնի իր հանգուցյալ որդու դիակի նկարները կամ տեսանյութ դիտի այդ մասին: Որոշ կայքերից օրինակ վերցնելով՝ գոնե հնարավոր էր կրճատել եղբորս անվան տառերը եւ չհայտնել նրա ընտանիքի մասին մանրամասներ: Իմ տատիկը, որը երկրում չէ եւ չի կարող վշտալ մեզ հետ միասին, տեղեկացել է այս դժբախտության մասին ձեր «շնորհիվ» եւ այժմ գտնվում է շատ ծանր հոգեբանական եւ ֆիզիկական վիճակում:**

**Ես խնդրում եմ մարդկային լինել եւ նվազագույնի հասցնել այդ տեղեկատվությունը, այլապես մենք ստիպված կլինենք դիմել այլ միջոցների:**

**Կանխավ շնորհակալություն:**

ԼԻԼԻԹ ՀԱԿՈԲՅԱՆ

# Անշարժ գույքի գների չնչին աճ ապրիլին

## *Գործարքների քանակը նվազել է*

Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի՝ շուկայի վերլուծության տվյալների համաձայն, 2012-ի ապրիլին, Հայաստանի անշարժ գույքի շուկայում իրականացվել է 13555 գործարք, ինչը 1,8 տոկոսով ցածր է մարտի եւ 16,9 տոկոսով՝ 2011-ի ապրիլի գործարքների համեմատ: Միայն օտարման գործարքների քանակը ապրիլին մարտի համեմատ նվազել է 5,5 տոկոսով, իսկ անցյալ տարվա ապրիլի համեմատ՝ 14,9 տոկոսով: 3411 օտարման գործարքներից առուվաճառքներինը կազմել է 77,6 տոկոսը: Մնացածը նվիրատվություններն ու փոխանակություններն են: Օտարված անշարժ գույքի 40 տոկոսը բնակարաններն են, իսկ օտարման գործարքների քանակի 43,6 տոկոսն արձանագրվել է Երեւանում:

Մայրաքաղաքում առուվաճառքի գործարքների 62,1 տոկոսն արձանագրվել է բազմաբնակարան շենքերի բնակարանների նկատմամբ: 2012-ի մարտի համեմատ, ապրիլին բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը Երեւանում աճել է 2 տոկոսով, իսկ նախորդ տարվա ապրիլի համեմատ նվազել՝ 17,6 տոկոսով:

Բնակարանների շուկայական միջին գները Երեւանում այս տարվա ապրիլին մարտի համեմատ աճել են՝ 0,8 տոկոսով: Ըստ վարչական շրջանների, Երեւանում բնակարանների 1 քմ մակերեսի միջին շուկայական գները այսպիսին են եղել.

Մարզերում, բացառությամբ Երեւանի, 2012-ի ապրիլին վաճառվել են 312 բնակարաններ, որոնց քանակը մարտի համեմատ նվազել է 4 տոկոսով, իսկ 2011-ի ապրիլի համեմատ աճել 0,3 տոկոսով: Միաժամանակ, բնակարանների միջին գները ապրիլին մարտի համեմատ մարզերում չնչին աճ են ունեցել 0,3 տոկոսով:

Երեւանից հետո ամենաթանկ բնակարանները ապրիլին եղել են Ծաղկաձորում, որտեղ 1 քմ մակերեսի շուկայական գինը կազմել է 292 հազար դրամ: Աբովյանում եւ Վաղարշապատում (Էջմիածնում) 1 քմ գինը 151 հազար դրամ է կազմել: Ապա գալիս են Նոր Հաճընը՝ գրեթե 128 հազար դրամ, Արմավիրը՝ 116 հազար դրամ, Եղեգնաձորը՝ 115 հազար դրամ, Գորիսը՝ 114 հազար դրամ, Իջեւանը եւ Աշտարակը՝ 110 հազար դրամ 1 քմ դիմաց ցուցանիշներով:

2012-ի ապրիլին Հայաստանում գրանցվել է անհատական տների առուվաճառքի 351 գործարք, որից 106-ը՝ Երեւանում: Մայրաքաղաքում անհատական տների առուվաճառքի գործարքների քանակը 2012-ի մարտի համեմատ աճել է 0,9 տոկոսով, իսկ մարզերում նվազել՝ 19,1 տոկոսով: 2011-ի ապրիլի համեմատ անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը Երեւանում նվազել է 9,4 տոկոսով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 25,8 տոկոսով: Միջինացված՝ 250 քմ շինության մակերես եւ 400 քմ տնամերձ ունեցող անհատական տների 1 քմ-ի միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը) 2012-ի ապրիլին մարտի համեմատ աճել են 0,7 տոկոսով: Ըստ Երեւանի վարչական շրջանների, գներն այսպիսին են եղել.

| Վարչական շրջաններ | Միջին գները (դրամ) | | |
|---|---|---|---|
| | ապրիլ 2011թ. | ապրիլ 2012թ. | մարտ 2012թ. |
| Կենտրոն | 447300 | 405000 | 400000 |
| Արաբկիր | 347400 | 335000 | 333050 |
| Քանաքեռ-Զեյթուն | 264200 | 262300 | 260000 |
| Նոր Նորք | 225700 | 225100 | 225050 |
| Ավան | 232200 | 235100 | 233000 |
| Էրեբունի | 235400 | 233100 | 233100 |
| Շենգավիթ | 230800 | 231000 | 229000 |
| Դավթաշեն | 252000 | 257500 | 254500 |
| Աջափնյակ | 221100 | 225050 | 221050 |
| Մալաթիա-Սեբաստիա | 221900 | 222000 | 219750 |
| Նուբարաշեն | 149500 | 140100 | 140100 |
| Միջինը Երեւանում (բացի Նորք-Մարաշից) | 257100 | 251900 | 249900 |

Մարզերում միջինացված են 200 քմ շինության եւ 1000 քմ տնամերձ մակերեսով անհատական տների գները: Այստեղ միջին գները ապրիլին մարտի համեմատ աճել են 1,1 տոկոսով: Ամենաթանկ անհատական տները Երեւանից հետո, ինչպես միշտ, Ծաղկաձորում են՝ 1 քմ-ն՝ 303 հազար դրամ: Երկրորդը Վաղարշապատը եւ Աբովյանն են, որտեղ 1 քմ-ն կազմել է 150 հազար դրամ: Ապա գալիս են Աշտարակը՝ 130 հազար դրամ, Նոր Հաճընը 128 հազար դրամ, Գորիսը՝ 126 հազար դրամ, Իջեւանը եւ Բյուրեղավանը ՝ 119 հազար դրամ, Ջերմուկը՝ 118 հազար դրամ 1 քմ դիմաց:

Հողի շուկայում հետեւյալ պատկերն է՝ 2012-ի ապրիլին 2011-ի ապրիլի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքների քանակն նվազել է 21,5 տոկոսով, աճուրդով վաճառքներինը՝ 50,8 տոկոսով:

2012-ի ապրիլին մարտի համեմատ վարձակալության գործարքներն աճել են 2,6 տոկոսով, իսկ 2011-ի ապրիլի համեմատ՝ նվազել 2,3 տոկոսով:

Ապրիլին իրականացվել են հիփոթեքային գրավադրման 172 գործարքներ, որից 85-ը՝ Երեւանում: 2012-ի մարտի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը աճել է 2,5 անգամ, ընդ որում, Երեւանում՝ 2,7 անգամ, իսկ մարզերում՝ 4,8 անգամ: 2011-ի ապրիլի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը նվազել է 20,4 տոկոսով, ընդ որում, Երեւանում՝50,3 տոկոսով, իսկ մարզերում աճել՝ 93,3 տոկոսով:

| Վարչական շրջաններ | Միջին գները (դրամ) | | |
|---|---|---|---|
| | ապրիլ 2011թ. | ապրիլ 2012թ. | մարտ 2012թ. |
| Կենտրոն | 467000 | 458900 | 458800 |
| Արաբկիր | 378000 | 364500 | 364000 |
| Քանաքեռ Զեյթուն | 275400 | 275200 | 274700 |
| Նորք-Մարաշ | 278000 | 301000 | 301000 |
| Ավան | 238200 | 255500 | 249200 |
| Էրեբունի | 236800 | 225300 | 219100 |
| Շենգավիթ | 240900 | 240000 | 239000 |
| Դավթաշեն | 265000 | 258300 | 257000 |
| Աջափնյակ | 234400 | 236700 | 236000 |
| Մալաթիա-Սեբաստիա | 231900 | 223000 | 219000 |
| Նուբարաշեն | 150700 | 144500 | 144500 |
| Միջինը Երեւանում (բացի Նոր Նորքից) | 272390 | 271200 | 269400 |

Այսպիսով, հարկ է արձանագրել, որ անշարժ գույքի շուկայում գների անկումն ապրիլին դադարել է եւ անգամ չնչին աճ արձանագրել: Այդուհանդերձ, ինչպես եւ ենթադրել էինք նախկինում, գարնան ամիսներին նկատելի գնային փոփոխություններ այստեղ չեն լինի:

**ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

# Վարչական իրավախախտումների խստացումը զայրույթի ալիք է բարձրացրել

«**Ազգը**» բազմիցս գրել է ճանապարհային երթեւեկության նոր կարգի, տեսախցիկների, արագաչափերի եւ դրանց արձանագրած խախտումների մասին: Խաչմերուկների եւ սահմանված արագությունը գերազանցելու համար ընդունված տուգանքները սկսել են գործել այս տարվա մարտի 17-ից: Եթե մինչեւ հունիսի 2-ը սահմանված չափից արագության գերազանցման համար վարորդը տուգանվում էր նախատեսված 12.000-20.000 դրամ, իսկ կրկնվելու դեպքում անգամ վարորդական իրավունքից զրկվում, ապա ուժի մեջ մտած նոր օրենքով տուգանքի չափերը 10.000-70.000 դրամ են դարձել, վերացվել է վարորդական իրավունքից զրկումը: Ստացվում է, որ վարորդները անթիվ ու անհամար անգամ կարող են խախտում կատարել, վճարել տուգանք եւ չզրկվել վարելու իրավունքից: Ահա հենց այս մտահոգությունն ու զայրույթն արտահայտեց «**Ազգին**» հյուրընկալված «Աքիլլես» վարորդական իրավունքների պաշտպանության կենտրոն հասարակական կազմակերպության նախագահ **Էդուարդ Հովհաննիսյանը**: Վերջինիս կարծիքով, անհայտ փողի հավաքում է տեղի ունենում:


*Էդուարդ Հովհաննիսյան*

Մինչ հաջորդ փոփոխություններին անդրադառնալը, պրն Հովհաննիսյանը, պատասխանելով «**Ազգի**» հարցերին, տեղեկացրեց, որ մոտ երկու շաբաթից «Աքիլլեսը» տպարանից դուրս կբերի 25.000 օրինակով տպված վարչական իրավախախտումների մասին գրքույկը, որը կտրամադրվի հանրապետության բոլոր բենզա-գազալցակայաններին, տաքսի սերվիսներին, երթուղային տրանսպորտի ներկայացուցիչներին: Այդ նոր գրքում, բացի տույժ ու տուգանքներից, զետեղված կլինեն նաեւ վարորդ-տեսուչ փոխհարաբերությունների, իրավունքների, պարտավորությունների ու վարչական տուգանքների նոր փոփոխությունների եւ ավելացված չափերի մասին մանրամասն տեղեկություններ ու դրույթներ:

Պրն Հովհաննիսյանը բացատրում էր, որ «տրանսպորտային միջոցների՝ վարորդների կողմից խաչմերուկների անցման կանոնները խախտելու համար տուգանք սահմանվել է հնգապատիկի չափով եւ վերացվել է վարորդական իրավունքից զրկելը: Մի՞թե դա էլ փող հավաքելու նոր ձեւ չէ», հարցնում էր պրն Հովհաննիսյանը ու օրինակ բերում. «Այս պահին ամենաաղմկահարույց հարցը Ռուբինյանց փողոցին է վերաբերում: Ռուբինյանցից չհասած Ահարոնյան փողոց՝ տեղադրված է տեսախցիկ: Այդ վայրում ճանապարհային երթեւեկության արագությունը սահմանափակող 40 կմ/ժամ նշանը տեսանելի չի եղել վարորդների համար՝ տվյալ վայրում ծառերի խիտ ճյուղերով, սաղարթով ծածկված լինելու պատճառով: Բնական է, որ նշված վայրում վարորդը, չտեսնելով սահմանափակող արագության նշանը՝ արագությունը զարգացնում է մինչեւ 60 կմ/ժամ՝ դառնալով իրավախախտող: Հենց այդ հասցեում, ապրիլի 20-ից մինչեւ մայիսի 29, մինչեւ ժամը 15-ը, վարորդները անօրինական ձեւով տուգանվել են՝ օրենքի խախտում 10.000-50.000 դրամի չափով»:

Տեղեկացնենք, որ մեկ շաբաթ առաջ Achill.am կայքում «Աքիլլես» կազմակերպությունը տեղադրել է հատուկ դիմումի ձեւը եւ անհրաժեշտ ապացույցները՝ ճանապարհային ոստիկանության կողմից ընդունված տուգանքի որոշումները անվավեր ճանաչելու խնդրանքով: Այդ կարգի դիմումների թիվը արդեն անցել է 100-ից:

«**Ազգի**» հարցին՝ եթե ճանապարհային ոստիկանությունը մերժի այդ դիմումները, հաջորդ քայլը ո՞րն է լինելու, պրն Հովհաննիսյանն ասաց. «Աքիլլեսը» պատրաստ է դիմել վարչական դատարան՝ վարորդների շահերը եւ խախտված իրավունքները պաշտպանելու, արդարացի լուծումներ գտնելու համար»: «Արգելված տեղում կայանելու դեպքում այդ խախտման համար սահմանված էր 10.000 դրամ տուգանք եւ չկար տվյալ վայրից մեքենան հատուկ տուգանային հրապարակ տեղափոխելու համար սահմանված գումար: Իսկ այս նոր օրենքով մեքենայի տեղափոխումը տուգանային հրապարակ՝ տուգանքի հետ կազմում է 80.000 դրամ: Հետաքրքիր է, թե ինչպե՞ս 10.000 դրամ տեղափոխումը եւ 10.000 դրամ տուգանքը դարձավ 80.000 դրամ: Դա մի՞թե գումարների հավաք չէ եւ այդ անհամաչափությունը փաստում է, որ գումարահավաք է...»:

Շատ վարորդների շրջանում զայրույթ է առաջացրել ղեկի մոտ ընթացքի ժամանակ ծխելու համար սահմանված եռապատիկ-հնգապատիկ չափի տուգանքը՝ 3000-5000 դրամ՝ բոլոր վարորդներին, անկախ տրանսպորտային միջոցից: Արգելվել է նաեւ ուղեւորներին ծխելը ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցներում եւ թեթեւ մարդատար տաքսիներում: Սակայն այս դեպքում մնում է չպարզաբանված, թե ո՞ւմ պետք է տուգանել՝ վարորդի՞ն, թե՞ ծխող ուղեւորին:

Պրն Հովհաննիսյանը ներկայացրեց փոփոխված տուգանքի չափերը. տրանսպորտային միջոցները ոչ սթափ վիճակում վարելու համար նախատեսվածից ավելացել է կրկնակի չափով եւ դարձել 100.000 դրամ: Իսկ եթե վարորդի արյան մեկ լիտրի մեջ մաքուր ալկոհոլի պարունակությունը գերազանցում է 1 գրամը, կամ եթե նրա մեկ լիտր արտաշնչած օդի մեջ մաքուր ալկոհոլի պարունակությունը գերազանցում է 0,5 միլիգրամը, ապա վարորդը տուգանվում է 150.000 դրամ: Իսկ եթե վարորդի ոչ սթափ վիճակում լինելը պայմանավորված է արյան կամ մեզի մեջ թմրամիջոցի կամ հոգեմետ նյութի պարունակությամբ՝ զրկում մեկ տարի ժամկետով: Ինչպես նշում էր պրն Հովհաննիսյանը «Միակ դրականը այս խախտման դեպքում այն է, որ կրկնակի խախտում կատարելու համար վարորդական իրավունքից 1 տարի ժամկետով զրկելը մնացել է ուժի մեջ: Իհարկե, կան որոշ նվազեցումներ տուգանքներում՝ վերացվել է ընդհանրապես տեխզննում սահմանված ժամկետում չանցնելու համար սահմանված 50.000 դրամ տուգանքը: Դրա հետ մեկտեղ ներդրվել է տեխզննման կտրոնը դիմապակու սահմանված տեղում չփակցնելու կամ չգործող տեխզննման կտրոնով երթեւեկելու համար 20.000 դրամ տուգանք»:

Գաղտնիք չէ, որ մութն ընկնելուն պես վքարների, վրաերթերի մեծ մասը բաժին է ընկնում տրանսպորտային միջոցի հեռահար լույսը մոտակայի չփոխարկելու կամ արգելված դեպքերում հեռահար լույսերով վարելու պատճառով: Եվ ահա այդ խախտման տուգանքը բարձրացվել է տասնապատիկի չափով՝ դարձել 10.000 դրամ: Իսկ վարորդների կողմից ձայնային ազդանշանի կիրառման կանոնները խախտելու համար հնգապատիկի չափով տուգանք է սահմանվել:

Զրույցի ավարտին պրն Հովհաննիսյանը ասաց, որ դեռ չորս տարի առաջ «Աքիլլես» կազմակերպությունը դիմել է Ազգային ժողովին, որ վերացնեն եռապատիկ ու հնգապատիկ տուգանքները, «Վարչական իրավունքների օրենսգիրքը» մեղմացնելու, հստակեցնելու առաջարկներով, սակայն դրանք, ԱԺ-ի համապատասխան հանձնաժողովում քննարկելուց հետո, առ այսօր մնացել են անհետեւանք: Կազմակերպության ղեկավարը պնդում էր, որ մինչ նման նախագծերը ընդունելը հարկ է, որ հանրային քննարկումներ անցկացվեն, հաշվի առնվեն վարորդների եւ նրանց շահերը պաշտպանող կազմակերպությունների կարծիքները:

**ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ**

# «Երրորդ ուժը» աշխատում է, որ Մինսկի խումբը «չաշխատի»

*Վրաստանի վախերն ու սպառնալիքները՝ «Եվրասիական միությունը», Ռուսաստանի ներխուժման հնարավորությունը, կրկին Ռուսաստանը, նորից Ռուսաստանը...*

«Աստված մի արասցե՝ լինի հայ-ադրբեջանական նոր պատերազմ, կթաղի հարավկովկասյան բոլոր երեք պետությունների ինքնիշխանությունն ու անկախությունը», ուկրաինական «Զերկալո նեդելի. Ուկրաինա» պարբերականում հունիսի 22-ին հրապարակված հարցազրույցում հայտարարել է Վրաստանի արտգործնախարար Գրիգոլ Վաշաձեն՝ պատասխանելով հարցին, թե ինչ կանի Թբիլիսին Լեռնային Ղարաբաղում ռազմական գործողությունների վերսկսման դեպքում եւ արդյոք հնարավո՞ր է կանխել այդ հակամարտությունը:

Վրաստանի արտաքին գերատեսչության ղեկավարը հույս է հայտնել, որ «ԵԱՀԿ Մինսկի խմբի ջանքերը կբերեն շուտափույթ լիցքաթափման», նկատի ունենալով շփման գծում եւ սահմանային հատվածներում տեղի ունեցած միջադեպերն ու սրված իրավիճակը: «Սակայն երրորդ ուժն ակտիվորեն աշխատում է, որ ԵԱՀԿ Մինսկի խումբը չհասնի որեւէ առաջընթացի, իսկ շփման գծում լարվածությունը պահպանվի հնարավորինս երկար»: Պարզաբանող հարցին, թե արդյոք «երրորդ ուժ» ասվածը Ռուսաստա՞նն է, Վաշաձեն արձագանքել է. «Ինչպես ասում են՝ գուշակեք ինքներդ»:

Այն դեպքում, երբ Ադրբեջանը երկրային ու ընդհանրապես բոլոր մեղքերում սովորել է մեղադրել Հայաստանին, Վրաստանի պարագայում էլ այդ դերում է հայտնվում Ռուսաստանը, ընդ որում, ղարաբաղյան հակամարտության համատեքստում Ռուսաստանի հնարավոր ու անհնար ներգրավման բոլոր սցենարները Վրաստանում համարվում են հնարավոր ու հավանական, քանի որ այդ կերպ «արդարացվում» կամ աշխարհին առավել թանկ է վաճառվում 2008-ի օգոստոսին վրացական արկածախնդրության հետեւանքով նույն այդ Ռուսաստանի կողմից Աբխազիայի ու Հարավային Օսիայի ճանաչումը:

Հակառուսականությունը Վաշաձեի ողջ խոսքում ընկած է այն ամենի հիմքում, ինչը որեւէ կերպ առնչվում է ինչպես Ռուսաստանին, այնպես էլ Վրաստան պետության «անվտանգությանը»: Մասնավորապես, այն պարագայում, երբ Ուկրաինային շատ հարցերում ողջունող Եվրոմիության շատ պաշտոնյաներ վերջերս խուսափում են այցելել Կիեւ՝ հաշվի առնելով նախկին վարչապետ Յուլիա Տիմոշենկոյի բանտարկությանն առնչվող հանգամանքները:

Մինչդեռ Վաշաձեն իր այցելության հիմքում դրել է նախ, որ «Վրաստանն ունի իր ազգային շահերը, նաեւ ռազմանական միություն ունի Ուկրաինայի հետ, ընդհանուր պատմություն»: Վաշաձեի խոսքով, այս ամենին ավելանում է նաեւ, որ «Վրաստանն ու Ուկրաինան ունեն ընդհանուր վտանգ-սպառնալիք. Վտանգ ինքնիշխանությանը, անկախությանը»: «Երբ Ռուսաստանում հայտարարում են Եվրասիական միության ստեղծման ծրագրերի մասին, ու հայտարարում են մարդիկ, որոնք, որպես կանոն, սովորեն կատարել իրենց խոստումները, ապա բոլորը լավ հասկանում են, որ խոսքը ձեւափոխված Խորհրդային Միության, ավելի ճիշտ՝ այդ փլուզված կայսրության քաղաքական ու ռազմական ասպեկտների մասին է»:

Իսկ թե ինչու է Վաշաձեն ամենուր հայտարարում, թե «Ռուսաստանի նոր ռազմական ագրեսիան հնարավոր է», Ուկրաինայում վրացի դիվանագետը պարզաբանել է, թե «Վրաստանը Ռուսաստանի համար բացարձակապես անհրաժեշտ է», նաեւ «եթե Ռուսաստանը Վրաստանում հասնի ռազմաքաղաքական գերակայության, Հարավային Կովկասի մյուս երկրներով էլ զբաղվելու կարիք չի լինի»: Որ Հայաստանի առնչությամբ Վաշաձեն այսօրինակ կարծիք կարող է հայտնել, նորություն չէ, հատկապես որ այս պաշտոնյան աշխարհագրության հետ կարծես լուրջ խնդիրներ ունի (Վաշաձեն Երեւան այցելություններից մեկի ժամանակ տեղը չէր բերում, թե ինչ ասել է Ջավախք - Ա.Հ.), սակայն գոնե Ադրբեջանում այս մոտեցումը թերեւս չհավանեն:

Ինչեւէ, Վաշաձեի տրամաբանությունն ուղղակի զարմացնում է, երբ վրացի դիվանագետը փորձում է հուսակեցնել, թե «Ռուսաստանի համար տարածաշրջան ներխուժելու առիթ կարող է ծառայել ցանկացած ռազմաքաղաքական բարդացում՝ Լեռնային Ղարաբաղը, Իրանը...»: Ասել է թե Վրաստանի ընկալումներում ղարաբաղյան խնդրի սրացումները կբերեն Ռուսաստանի ներխուժմանը՝ թերեւս Վրաստանի վրայով մինչեւ Արցախ: Այդուհանդերձ, այսօրինակ «ահարկու» սպառնալիքը գիտակցելով հանդերձ, Վաշաձեն հայտարարել է, թե Ռուսաստանի հետ հարաբերությունները վերականգնելու համար վերջինս պետք է «ապաօկուպացիա ապահովի, ճանաչի տարածքային ամբողջականությունը» եւ այլն: Այդ դեպքում «Ռուսաստանը ավելի բարի հարեւան, քան Վրաստանը, չի ունենա»:

Ամեն դեպքում, թե ինչ արժեքային համակարգով է առաջնորդվում իր դատողություններում Վրաստանի արտաքին գերատեսչության ղեկավարը, առավել քան ցցուն արտահայտում է նույն հարցազրույցի մեկ այլ հատված: Հարցին, թե Աբխազիայում ու Հարավային Օսիայում վստահությունը Վրաստանի հանդեպ բավականին ցածր է, Վաշաձեն ընդհատել է հարցն ու կարճ արտահայտվել. «Աբխազների կարծիքը ոչ ոք չի հարցրել»:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

# Եգիպտոսի նախագահն այսուամենայնիվ Մուրսին է

*Նա կհարգի երկրի միջազգային պարտավորությունները*

Եգիպտոսում նախագահական ընտրությունների 2-րդ փուլից (հունիսի 16-17-ը) հետո երկրում ստեղծված անորոշության լարված վիճակը վերջ է գտել հունիսի 24-ին, երբ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը պաշտոնապես հրապարակել է ընտրությունների արդյունքները: Դրանք հաստատում են սեփական հաղթանակի վերաբերյալ, արդեն հունիսի 17-ին իսլամիստների թեկնածու Մոհամմեդ Մուրսիի արած պնդումը: Պաշտոնական տվյալների



համաձայն, Մուրսին ստացել է բոլոր քվեների գրեթե 52 տոկոսը: Նրա ախոյանը՝ երկրի նախկին վարչապետ Ահմեդ Շաֆիկը ստացել է 48 տոկոսից քիչ ավելի: Քվեարկությանը մասնակցել է ձայնի իրավունք ունեցողների 51,8 տոկոսը:

Արդեն որպես երկրի ճանաչված նախագահ իր առաջին ելույթն ունենալով՝ Մուրսին ժողովրդին խոստացել է, որ լինելու է բոլոր եգիպտացիների նախագահը:

Ֆրանսպրեսը մեջբերում է Մուրսիի այն խոսքերը, որ Եգիպտոսը չի հրաժարվի անցյալում կնքած միջազգային պայմանագրերից: Նա հայրենակիցներին կոչ է արել ամրապնդել ազգային միասնությունը, քանի որ միայն այդպես կարելի է հաղթահարել երկրի դժվարությունները:

Նոր նախագահը շնորհակալություն է հայտնել հանուն վերափոխումների զոհված «նահատակներին» եւ հայտարարել է, որ «հեղափոխությունը կշարունակվի, քանի դեռ չեն կատարվել դրա բոլոր նպատակները»:

Ավելի վաղ Մուրսին դուրս էր եկել «Մուսուլման եղբայրներ» շարժումից (որի թեկնածուն էր ընտրություններում), ինչպես նաեւ իսլամիստական Ազատության եւ արդարության կուսակցությունից, որը շարժման քաղաքական թեւն է:

Մուրսիի հաղթանակը աշխարհում զանազան արձագանքներ է հարուցել: Պաղեստինյան «Համաս» արմատական շարժման ներկայացուցիչը հայտարարել է, որ Եգիպտոսը նախագահ է ընտրել ոչ միայն իր, այլեւ արաբական եւ իսլամական ժողովուրդների համար: Իրանի ԱԳՆ-ն պաշտոնական հայտարարության մեջ նշել է, որ Եգիպտոսի ժողովրդի հեղափոխական շարժումը «Մերձավոր Արեւելքի եւ իսլամական զարթոնքի նոր դարաշրջանի վերջին փուլերում է»:

Սաուդյան Արաբիան որեւէ մեկնաբանություն չի արել: ԱՄՆ-ը Եգիպտոսի նոր նախագահին կոչ է արել գործակցել բոլոր կուսակցությունների եւ հասարակական շարժումների հետ եւ տարածաշրջանում պահպանել երկրի խաղաղարար դերը: Մեծ Բրիտանիան խոսել է Եգիպտոսում մարդու եւ կրոնական փոքրամասնությունների իրավունքների մասին: Եվրոմիության մյուս պետություններն արտահայտվել են նույն ոգով:

«Միջազգային պարտավորություններ» ասելով Մուրսին առաջին հերթին, անշուշտ, նկատի ունի Իսրայել-Եգիպտոս հաշտության պայմանագրի հեռանկարները, նշում են վերլուծաբանները:

# «Միջադեպը չի դառնա պատերազմի պատճառ, սակայն անպատիժ էլ չի մնալու»

*1-ին էջից*

Ինչ վերաբերում է Թուրքիայի կառավարությանը, ապա այսօր թուրքական ինքնաթիռը վայր գցելու հարցը պետք է քննարկվեր նախարարների խորհրդի նիստում: Սակայն մինչ այդ նախորդ օրը միջադեպի առնչությամբ թուրքական հանրային հեռուստատեսությանը պարզաբանումներ տվեց արտգործնախարար Ահմեդ Դավութօղլուն, իսկ վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը հանդես եկավ հայտարարությամբ, խորհրդարանական երեք կուսակցությունների ղեկավարների հետ ունեցած առանձին հանդիպումներից հետո:

Թուրքական հանրայինի հարցերին պատասխանելիս Դավութօղլուն ասաց, որ իրենց ինքնաթիռը, ելնելով Արեւելյան Միջերկրականում տիրող իրավիճակից, ազգային ռադարային համակարգը ստուգելու համար ուսումնավարժական թռիչք է իրականացրել եւ ամենեւին չի հետապնդել հետախուզություն կատարելու նպատակ, թռչելով միաժամանակ առանց համապատասխան սպառազինության: Նրա խոսքերով, հետախուզության առաջադրանք ունեցող ինքնաթիռները այդպես չեն ուղարկվում:

Ըստ Թուրքիայի արտգործնախարարի, թուրքական ինքնաթիռի ցածր բարձրությամբ թռիչքը պայմանավորված էր ռադարային սեփական համակարգի ստուգման առաջադրանքով, ինքնաթիռը խոցվել է Սիրիայի օդային տարածքից 13 մղոն հեռավորության վրա՝ միջազգային գոտում, թեեւ խախտել է սահմանը, սակայն շատ կարճ ժամանակով, այն էլ՝ առաջադրանքը կատարելուց հետո Թուրքիա վերադառնալիս:

Նրա կարծիքով, Սիրիայի ռազմաօդային ուժերը թուրքական ինքնաթիռը վայր են գցել սահմանի խախտումից 12-13 րոպե անց, երբ թուրքական օդային տարածքում էր, առանց որեւէ նախազգուշացման:

Վերջում Դավութօղլուն ասաց. «Թող ոչ ոք կասկածի տակ չդնի Թուրքիայի հանդգնությունը: Մեզ համար նշանակություն չունի, թե որ երկիրը դա կանի: Անհրաժեշտ բոլոր քայլերը կատարելու ենք»: Ո՞րն են դրանք: Այդ հարցին, ինչպես երեկ նշեց «Հյուրիեթը», պատասխանել է պաշտոնական Անկարան, ներկայացնելով Թուրքիայի դիրքորոշումը. «Այս միջադեպը չի դառնա պատերազմի պատճառ, սակայն անպատիժ էլ չի մնալու»: Անկարան, միաժամանակ պահանջել է, որ Սիրիան ներողություն խնդրի ինքնաթիռը վայր գցելու համար եւ պատժի նրանց, ովքեր այդպիսի հրաման են տվել: Դրա հետ տարակուսանք է հայտնել առ այսօր լռություն պահպանող նախագահ Բաշար Ասադի վարչակարգի կեցվածքի առնչությամբ, գնահատելով դա թուրքական ինքնաթիռի խորտակումը գոհունակությամբ ընկալելու դրսեւորում:

Այդ ընթացքում ընդդիմության առաջնորդների հետ հանդիպումներում, «Հաբերթուրքի» վկայությամբ, վարչապետ Էրդողանը բառացի ասել է. «Մենք, որպես մեծ պետություն, չենք կարող ճանճերով զբաղվել, սակայն դիմելու ենք իրավական բոլոր միջոցների եւ սպասելու: Կանենք այն, ինչ անհրաժեշտ է»:

Թե Էրդողանը ինչ է անելու, ոչ ոք չգիտի: Բայց որ Սիրիան առանց տատանվելու, վայր է գցել սահմանը խախտող թուրքական ինքնաթիռը՝ ակնհայտ է: Ակնհայտ է նաեւ, որ ինքնաթիռ վայր գցելու հակաքայլը պետք է լինի համաչափ: Դա են պահանջում միջազգային իրավունքի նորմերը, այսինքն՝ քար գցողին հրազենից փամփուշտ արձակելը, ըստ այդ նորմերի, գնահատվում է որպես «ուժի անհամաչափ կիրառում»: Թերեւս դրանով է բացատրվում միջադեպի առնչությամբ Անկարայի պաշտոնական դիրքորոշումը. «Դա չի դառնա պատերազմի պատճառ, սակայն անպատիժ էլ չի մնալու»:

Գալով Դավութօղլուի պարզաբանումներին, ապա դրանք ոչ միայն զավեշտալի են, այլեւ արդարացման երանգ են կրում: Սակայն որեւէ ռազմական ինքնաթիռ ստուգելու համար սեփական երկրի ռադարային համակարգի զգոնությունը, սահմանի երկայնքով, ինչպես Դավութօղլուն է պնդում, ուսումնավարժական թռիչքներ չի անցկացնում, էլ չենք խոսում Սիրիայի սահմանը 15 րոպե տեւողությամբ խախտելու մասին: Թուրքական ինքնաթիռը հիրավի ստուգել է հակաօդային պաշտպանության ռադարային կայանի զգոնությունը, սակայն ոչ թե թուրքական, այլ՝ սիրիական համակարգի, թռչելով 75 մետր բարձրության վրա:

Ինչո՞ւ 75 մետր, որովհետեւ թուրքական կողմը գիտեր, որ Սիրիան ունի խորհրդային հակաօդային համակարգ, որը չէր գրանցում 100 մետրից ցածր թռչող ինքնաթիռներին: Քանի որ վայր է գցվել 75 մետր բարձրության վրա թռչող ինքնաթիռը, ուստի թուրքերի համար պարզ դարձավ Սիրիայում խորհրդային հակաօդային համակարգը արդիականացված ռուսական համակարգով փոխարինելու իրողությունը: Պարզապես թուրքական փորձը վերածվեց փորձանքի, խոցված ինքնաթիռի օդաչուների, ինչպես նաեւ «մեծ տերություն» Թուրքիայի միջազգային հեղինակության համար հատկապես տարածաշրջանում, արաբական երկրներում եւ իսլամական աշխարհում:

ԱԶԳ

## Սփյուռք

ԱՅԺ

# Էրեբունի ամրոցը կարեւոր հնագիտական հուշարձան ողջ Մերձավոր Արեւելքի համար

2012 թ. հունիսի 5-ից Էրեբունի ամրոցում վերսկսված հայ-ֆրանսիական հնագիտական պեղումների ծրագիրը նախատեսված է 2012-2015 թվականների համար եւ ֆինանսավորվում է «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի ու Ֆրանսիայի արտաքին գործերի եւ մշակույթի նախարարությունների կողմից:

Օրերս Էրեբունի ամրոց էին այցելել ՀՀ-ում Ֆրանսիայի դեսպան Անրի Ռենոն՝ ՀՀ մշակույթի նախարարի տեղակալ Արեւ Սամուելյանի եւ դեսպանության մշակութային համագործակցության հարցերով խորհրդական Ժան Պոլ Մարտենի ուղեկցությամբ:

Արգելոց-թանգարանի տնօրեն Գագիկ Գյուրջյանի եւ ՀՀ ԳԱԱ Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի տնօրեն Պավել Ավետիսյանի հետ միասին դեսպանը շրջել է պեղումների հրապարակով, ծանոթացել հնավայրի հարավային առանցքով բացված ուրարտական փողոցի եւ պեղումների արդյունքում բացված հնագիտական շերտերի թվագրման վերաբերյալ մեկնաբանություններին, զննել հնագետների կողմից հայտնաբերված մի քանի խեցեղեն գտածոներ եւ անգամ շոշափել դրանք: Պատասխանելով լրագրողների բազմաթիվ հարցերին՝ Անրի Ռենոն նշել է, որ «... հնագիտությունը թույլ է տալիս հասկանալ, թե ով ես դու, որտեղից ես գալիս եւ ուր ես գնում: Հնագիտական հետազոտությունները կարեւոր են այնքանով, որ դրանք պատասխանում են ինքնության հետ կապված հարցերին»: Նա թեեւ խոստովանել է, որ Հայաստանի հարուստ հնավայրերից ճանաչում է միայն Էրեբունին, սակայն հավաստիացրել է, որ առաջիկայում ծրագրում է այցելել նաեւ այլ հուշարձաններ:

Պեղումների նպատակը եւ նշանակությունը ներկայացրել են ֆրանսիական արշավախմբի ղեկավար Ստեֆան Դեշամպը եւ Ֆրանսուա Ֆիշե Դը Կլերֆոնտենը: Ստեֆան Դեշամպը նշել է, որ Էրեբունին հետաքրքրական հնավայր է ե՛ւ իր ճարտարապետության, ե՛ւ հայտնաբերված հնագիտական առարկաների տեսանկյունից: Նա Էրեբունին գնահատել է որպես կարեւոր հնագիտական հուշարձան՝ ողջ Մերձավոր Արեւելքի համար: Դեսպանի հետ զրույցում մշակույթի նախարարի տեղակալ Արեւ Սամուելյանը բազմիցս կարեւորել է Էրեբունիի դերը Երեւան մայրաքաղաքի համար եւ շեշտել է հնավայրը հանրությանը նորովի ներկայացնելու, բարելավումների անհրաժեշտությունը:

Արգելոց-թանգարանի տնօրեն Գագիկ Գյուրջյանը դեսպանին տեղեկացրել է, որ արդեն ֆրանսիացի գործընկերների հետ աշխատում են համատեղ ցուցահանդեսի շուրջը, որը կրելու է «Էրեբունի. երեկ եւ այսօր» խորագիրը:

Մ. Մ.

# Բացվեց «Սփյուռք» ամառային դպրոցը



Հունիսի 25-ին կայացավ «Սփյուռք» ամառային դպրոցի հանդիսավոր բացումը: Դպրոցը հիմնել է ՀՀ սփյուռքի նախարարությունը Երեւանի պետական համալսարանի հենքի վրա:

Ներկաներին ողջունեց եւ «Սփյուռք» ամառային դպրոցի մեկնարկն ազդարարեց ՀՀ սփյուռքի նախարար **Հրանուշ Հակոբյանը**: «Այսօր պատմական օր է: Պատմական, քանի որ առաջին անգամ ՀՀ նախագահի հանձնարարությամբ մեկնարկում է մի դպրոց, որն իր նպատակների իրագործմամբ մեծագույն ավանդ է ունենալու հայապահպանության գործում»,- նշեց նախարարը: Անդրադառնալով դպրոցի հինգ բաժիններին՝ նախարարն առանձնացրեց մայրենի լեզվի արագացված ուսուցումը, որը «հնարավորություն կտա Մայր Հայրենիքը դարձնել մայրենիի ուսուցման կենտրոն եւ մեր Սփյուռքի երիտասարդները հնարավորություն կունենան Հայրենիքում մայրենին սովորել եւ արեւմտահայերենով եւ արեւելահայերենով», հավելեց Հ.Հակոբյանը:

Ներկաներին ողջունեց նաեւ ԵՊՀ ռեկտոր Ա. Սիմոնյանը:

Բացման հանդիսավոր արարողությանը ներկա էին պատվոնավոր անձինք, մշակույթի եւ գրականության գործիչներ, ԵՊՀ դասախոսներ եւ ուսանողներ:

# Հրավեր Ճապոնիայից

«Հայաստանի Փոքրիկ Երգիչներ» երգչախումբը հրավեր է ստացել Ճապոնիա մեկնելու՝ համերգային մեծ շրջագայությամբ: Հայ մշակույթի համար էական նշանակություն ունեցող այս ծրագիրը տեղի կունենա սույն թվականի հուլիսի 7-ից օգոստոսի 12-ը:

Երգչախումբը 16 համերգով հանդես կգա Ճապոնիայի խոշոր քաղաքներում, կունենա բազմաթիվ հանդիպումներ ճապոնացի մշակույթի գործիչների, հայտնի արվեստագետների եւ երիտասարդների հետ:

Շրջագայությունը միտում ունի մերձեցման եզրեր հաստատելու հայ եւ ճապոնացի ազգերի միջեւ, երգչախումբը ներկայացնելու է հայկական հարուստ մշակույթը եւ, ինչպես միշտ, հնչեցնելու նաեւ համաշխարհային անվանի հեղինակների ստեղծագործություններ:

«Հայաստանի Փոքրիկ Երգիչներ» երգչախումբը իր ողջ շրջագայության ընթացքում նաեւ կկատարի՝ Հայ Փոքրիկ Երգիչներ Միջազգային Ասոցիացիայի եւ Տիգրան Հեքեքյանի կողմից հայտարարված միջազգային մանկական խմբերգային մրցույթի երկու հաղթողների ստեղծագործությունները: Հաղթողները կհայտարարվեն 2012-ի հունիսի ընթացքում:

# Եվս մեկ սփյուռքյան ձեռնարկ՝ ի նպաստ հայապահպանման

2011-ի նյույորքյան հրատարակության «Անգլերեն-հայերեն ուսուցողական բառարան եւ խօսելավարժութիւն»-ը՝ հեղինակությամբ Նուբար Քյուփելյանի եւ Սիլվա Լ. Տեր-Ստեփանյանի, հասցեագրված է սփյուռքի անգլիախոս հայությանը: 766 էջից բաղկացած ստվարածավալ բառարանը կազմված է երկու՝ անգլերեն-հայերեն բառարանից եւ անգլերեն-հայերեն խոսելավարժություն բաժիններից: Տպագրությունն իրականացվել է Իրմա Տեր-Ստեփանյանի աջակցությամբ՝ նվիրված Տեր-Ստեփանյան քույրերի ծնողների՝ Միհրան եւ Ալիս Տեր-Ստեփանյանների հիշատակին:




Ինչպես բառարանի նախամուտքում Հայոց Ամերիկայի Արեւելյան թեմի առաջնորդ Խաժակ արք.Պարսամյանն է նշում, տարիների ընթացքում առաջնորդարանի նախաձեռնությամբ տպագրված բազմաթիվ տարաբնույթ հրատարակությունների մեջ սա «Ս. Վարդան» մատենաշարով լույս տեսած առաջին բառարանն է՝ խոսելավարժության ընդարձակ բաժին պարունակող:

Բառարանային աշխատանքի հայտնի դժվարությունները այս հրատարակության պարագայում ավելի ակնհայտ են, եթե նկատի առնենք այն հանգամանքը եւ մանրամասն աշխատանքը, որ ուսուցումը դյուրացնելու նպատակով կատարել են հեղինակները: Խոսքը վերաբերում է մնտեցումների, սկզբունքների մշակված այն եղանակին, որ գործադրված է հայերեն բառերը անգլերեն տառերով ներկայացնելու, այսինքն՝ տառադարձության համար: Նախապես սրված է ձայնավորների եւ երկբարբառների համարժեք հնչյունային համակարգին: Բառային հոմանիշների իմաստային յուրաքանչյուր համարժեք ներկայացված է որպես առանձին միավոր: Բոլոր բառերը ենթարկված են մեկ ընդհանուր կանոն-օրինաչափության, որի մասին բառարան-ինքնուսույցի հեղինակները առաջաբանում տեղեկացնում են բավական մատչելի եւ օրինակներով (է-eh, ը-uh, ի-ee, այ-ahy, իւ-yoo, չ-teh, ու-oo եւ այլն):

Բառարանի մյուս կարեւոր առանձնահատկությունը եւ նորությունը բառերի՝ վանկատված տեսքով ներկայացնելը՝ եւս մեկ միջոց է ոչ հայախոսների համար՝ լեզուն դյուրին ըմբռնելու: Բառարանը տեւական, համբերատար եւ նախանձախնդիր աշխատանքի արդյունք է, որի կազմողներից Սիլվա Լ. Տեր-Ստեփանյանը՝ մեթոդիստ-մանկավարժ, սփյուռքի՝ արդեն նաեւ հայաստանյան կրթական շրջանակներին հայտնի անուն, բազմաթիվ դասագրքերի, մեթոդական ձեռնարկների հեղինակ, իր բազմամյա փորձը օգտագործել է՝ բառարանի գործածությունը (տառադարձություն, վանկատում եւ այլն) ոչ միայն հնարավորինս արդյունավետ, նաեւ գործածական դարձնելու: Այս առումով շատ կարեւոր է հրատարակության 2-րդ՝ խոսելավարժություն բաժինը, որ ներառում է կյանքի ամենազանազան ոլորտների, տարբեր երեւույթների, մարդկային հարաբերությունների լեզվական հիմնական հասկացություններ, շերտեր, մակարդակներ, ինչպես՝ մաղթանքների, խնդրանքի, ողջույնի, ծանոթության ձեւեր, ընտանեկան-հասարակական, կրթական, մշակութային, ազգային, եկեղեցական, առեւտրական-առնչին եւ այլ հարաբերություններ ընդգրկող ամենաանհրաժեշտ խոսակցական բառակապակցություններ:

Կարեւոր է նկատել բառարանի արդիական բնույթը՝ ներառվել են նաեւ ժամանակակից կյանքը, նորահայս ըմբռնումներ, երեւույթներ արտահայտող բառեր եւ բառաձեւեր, նորագույն տեխնոլոգիաներին առնչվող հասկացություններ, տերմիններ:

Այս ամենով, ինչպես նկատում է Սիլվա Տեր-Ստեփանյանը, բառարանը կազմման սկզբունքով ավանդական-ակադեմիականից տարբերվում է:

«Մենք կը հաւատանք, որ ազգի մը զաւակները իրարու զօդող գլխաւոր ազդակը լեզուն է, որուն միջոցաւ աշխարհի զանազան ցամաքամասերուն վրայ բնակութիւն հաստատող հայրենակիցները կրնան իրարու հետ հաղորդակցիլ եւ կապ հաստատել: Այս հրատարակութեան գլխաւոր նպատակն է հետաքրքրութիւն արթնցնել եւ օգնել բոլոր անոնց, որոնք ցանկութիւնը ունին սորվելու եւ գործածելու իրենց մայրենին», գրում է **Խաժակ արք. Պարսամյանը**:

1000 օրինակով տպագրված բառարանը առաջնորդարանից տրվում է որպես նվիրատվություն:

ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ

# Հիշելով Անրի Վեռնոյին



Անրի Վեռնոյի (Աշոտ Մալաքյան) շունչն ու ոգին թեւածել են Մոնրեալի Թեքեյան մշակութային միության կենտրոնական շենքի դահլիճում մայիսի 19-ին, որտեղ ներկաները հավաքվել են նշելու անվանի կինոռեժիսորի մահվան 10-րդ տարելիցը:

Ըստ «Արմինյն միրոր սփեքթեյթր» շաբաթաթերթի հաղորդագրության, «Վիգիոն կրեատիվ Թեքեյան» հանձնախմբի կազմակերպությամբ տեղի ունեցած միջոցառումը մեծ բավականություն է պատճառել հանդիսատեսներին: Բեմի վրա «Անրի Վեռնոյ» վերտառությամբ ռեժիսորական աթոռն է զետեղված եղել, որի կողքին 16 մմ նկարահանման ապարատը, ֆիլմեր ու կասետներ: Ողջույնի խոսքերից հետո հաղորդավար Մարի-Լոր Սիմեթիեն եւ ծրագրի նախագծող Տենսի Արզումանյանը անկաշկանդ զրույցի ձեւով հետաքրքրական դրվագներ են ներկայացրել ժուռնալիստ, ռադիոհաղորդավար, սցենարիստ եւ ռեժիսոր Վեռնոյի կյանքից:

Հիսուն տարի կինոյում աշխատած հայազգի մեծանուն արվեստագետը ծնվել է Ռոդոստոյում (Թուրքիա) 1920 թվին: 1930-ից բնակվել է Ֆրանսիայում, որտեղ Էքս-ան Պրովանսի լիցեյն ավարտելուց հետո զբաղվել է ժուռնալիստական գործունեությամբ: Հրապարակել է հոդվածների շարք հայկական հարցի մասին: 1954-ին ստեղծել է իր առաջին լիամետրաժ ֆիլմը: Նրա հետ են համագործակցել անվանի դերասան-դերասանուհիներ Ֆեռնանդելը, Ժան Պոլ Բելմոնդոն, Ալեն Դելոնը, Հենրի Ֆոնդան, Կլաուդիա Կարդինալեն, Ժան Գաբենը, Օմար Շարիֆը եւ այլն:




Վերջին շրջանի իր ամենահիշարժան ֆիլմերից է «Մայրիկը», որն անդրադառնում է 1915-ի Եղեռնի թեմային, որը ցուցադրվել է միջոցառման օրը հանդիսավոր բաժնից հետո: Վեռնոյի այլ ֆիլմերից են «Արգելված պտուղը» (1952), «Հանրային թշնամի N 1» (1953), «Պրեզիդենտ» (1962), «Եվ ինչպես... Իկար» (1978) եւ այլն: Ստեղծել է մոտ 70 ֆիլմեր: 1996-ին արժանացել է «Սեզար» մրցանակին կինոմատոգրաֆիայում ներդրած ավանդի համար, իսկ 2000-ին ընտրվել է Գեղարվեստի ակադեմիայի անդամ: Պարգեւատրվել է նաեւ «Պատվո լեգեոն» բարձրագույն կարգի շքանշանով: Վախճանվել է Փարիզում 2002-ի հունվարի 11-ին:

Հ. Ծ.

# «Միկան» ու «Շիրակը» դոկվում են հետապնդողներից

14-րդ տուրի հանդիպումներով ավարտվեց ֆուտբոլի Հայաստանի բարձրագույն խմբի առաջնության 2-րդ շրջանը: Տուրն աչքի ընկավ ընթացիկ առաջնության համար ռեկորդային արդյունավետությամբ. 4 խաղում խփվեց 18 գնդակ: Մինչեւ այդ ամենաարդյունավետը 13-րդ տուրն էր, որում գրանցվել էր 16 գոլ:

Արդյունավետ խաղով հատկապես աչքի ընկավ «Փյունիկը», որը 6-0 հաշվով ջախջախեց առաջնության բացահայտ հետնապահ «Արարատին»: Վերջինս 10-րդ անընդմեջ պարտությունը կրեց: Ընդ որում արարատցիներին հաջողվեց առաջին խաղակեսում անառիկ պահել սեփական դարպասը: Իսկ ահա ընդմիջումից հետո Սարգիս Հովսեփյանի հարվածով բացելով հաշիվը, փյունիկցիներն աչքի ընկան արդյունավետ գրոհներով. 2 գոլ խփեց Գոռ Մալաքյանը, մեկական անգամ աչքի ընկան Գագիկ Պողոսյանը, Կամո Հովհաննիսյանն ու Ղուկաս Պողոսյանը: Ընդ որում Գոռ Մալաքյանի խփած 2-րդ գնդակը ՀՀ առաջնություններում Փյունիկի» հոբելյանական՝ 1300-րդ գոլն էր:

Այս տուրում էլ հաջող խաղացին առաջատարները: «Միկան» Կապանում լարված մրցապայքարում «Գանձասարին» հաղթեց 3-2 հաշվով: Եվ կրկին թիմին հաղթանակ պարգեւեց փոխարինման մտած Սեմյոն Մուրադյանը: Նա շատ հաջող է խաղի մեջ մտնում: Ընթացիկ առաջնությունում «Միկայի» հարձակվողն արդեն 6-րդ գոլն է խփում փոխարինման դուրս գալով:

Հանդիպումը հաջող սկսվեց «Միկայի» համար, որն արդեն 5-րդ րոպեին Արեգ Ազատյանի հարվածով բացեց հաշիվը: Այնուհետեւ Աղվան Մկրտչյանը 2-րդ գնդակը խփեց: Հետագայում գանձասարցիներ Դեյան Վուկոմանովիչն ու Արթուր Ավագյանը գրավեցին Գեւորգ Կասպարովի դարպասը: «Միկան» 6-րդ անընդմեջ հաղթանակը տոնեց:

Վերջին հանդիպումներում կարծես իր խաղը վերագտնում է երկրի չեմպիոն «Ուլիսը», որը 3-րդ անընդմեջ հաղթանակը տոնեց: Թեեւ «Բանանցի» հետ խաղում առաջինը հաջողության էր հասել մրցակիցն Արտակ Դաշյանի հեռահար հարվածի շնորհիվ, սակայն «Ուլիսն» ի վերջո կամային հաղթանակ տոնեց: Աչքի ընկան Պատոն եւ Արսեն Բալաբեկյանը, որը փոխարինման դուրս գալով՝ 2 գոլ խփեց: Խաղի ավելացված ժամանակում «Բանանցի» պաշտպան Հովհաննես Համբարձումյանը կրճատեց հաշիվը՝ 3-2:




Ընթացիկ առաջնությունում վերելքով է հանդես գալիս Հայաստանի գավաթակիր Գյումրիի «Շիրակը»: Արարատում շիրակցիները 2-0 հաշվով հաղթեցին Դիլիջանի «Իմպուլսին»: Հաղթանակն ապահովեցին թիմի լեգեոնականներ Ֆոֆանա Բեկոյի եւ Լամին Լի Յոռոյի խփած գոլերը: Ընթացիկ մրցաշրջանում «Շիրակն» ու «Իմպուլսը» 3-րդ անգամ հանդիպեցին եւ կրկին հաջողությունն ուղեկցեց գյումրեցիներին:

**Մրցաշարային աղյուսակ**

| | Խ | Հ | Ո | Պ | Գ | Մ |
|---|---|---|---|---|---|---|
| 1. Միկա | 14 | 11 | 2 | 1 | 29-14 | 35 |
| 2. Շիրակ | 14 | 9 | 2 | 3 | 24-14 | 29 |
| 3. Իմպուլս | 14 | 7 | 2 | 5 | 22-20 | 23 |
| 4. Գանձասար | 13 | 6 | 2 | 5 | 14-10 | 20 |
| 5. Փյունիկ | 13 | 5 | 3 | 5 | 24-19 | 18 |
| 6. Ուլիս | 14 | 4 | 4 | 6 | 18-18 | 16 |
| 7. Բանանց | 14 | 3 | 3 | 8 | 15-21 | 12 |
| 8. Արարատ | 14 | 1 | 0 | 13 | 8-38 | 3 |

**Ռմբարկուները**

| | | |
|---|---|---|
| Անդրանիկ Բարիկյան | «Շիրակ» | 7 |
| Նորայր Գյոզալյան | «Իմպուլս» | 6 |
| Սեմյոն Մուրադյան | «Միկա» | 6 |
| Ֆիլիպ Տիմով | «Իմպուլս» | 6 |
| Հովհաննես Համբարձումյան | «Բանանց» | 6 |
| Ֆոֆանա Բեկո | «Շիրակ» | 5 |
| Վիլեն Այվազյան | «Փյունիկ» | 5 |

# Ուժեղագույն քառյակը կվիճարկի առաջնության պարգեւները

Ֆուտբոլի Եվրոպայի առաջնությունը թեւակոխել է վճռորոշ փուլ: Արդեն հայտնի են կիսաեզրափակիչի բոլոր մրցակիցները: Վաղը Դոնեցկում կմրցեն Պորտուգալիայի եւ Իսպանիայի հավաքականները, իսկ հաջորդ օրը Վարշավայում մրցավեճի կբռնվեն Գերմանիայի ու Իտալիայի ընտրանիները: Իսկ Եվրոպայի չեմպիոնին կորոշի հուլիսի 1-ին Կիեւի «Օլիմպիական» մարզադաշտում կայանալիք եզրափակիչ հանդիպումը:

Եթե հաղթողի գլխավոր հավակնորդներից մեկը՝ Գերմանիայի հավաքականը 4-2 հաշվով վստահ հաղթեց հույներին, իսկ Եվրոպայի գործող չեմպիոն Իսպանիայի ընտրանին էլ 2 անպատասխան գնդակ խփեց ֆրանսիացիների դարպասը, ապա Անգլիայի ու Իտալիայի մրցավեճի ելքը վճռեցին հետխաղյա 11 մ հարվածները: Եվրոպայի առաջնությունում առաջին անգամ խաղն ավարտվեց գոլազուրկ ոչ-ոքի եւ հարկ եղավ հաղթողին որոշելու 11 մ հարվածներով: Ավելի հաջողակ գտնվեցին իտալացիները՝ հաղթելով 4-2 հաշվով: Իսկ ահա Անգլիայի հավաքականն աշխարհի եւ Եվրոպայի առաջնություններում արդեն 5-րդ անգամ պարտվեց հետխաղյա 11 մ հարվածներով:

Վճռորոշ 11 մ հարվածը որսած Իտալիայի հավաքականի դարպասապահ **Ջանլուիջի Բուֆոնը** հայտարարել է, որ հաղթանակը նվիրում է երկրաշարժի զոհերի հիշատակին. «Հասկանալի է, որ մեր բախտը բերեց, քանի որ 11 մ հարվածաշարը նման է վիճակախաղի: Անգլիացիները գրեթե ոչ մի լուրջ սպառնալիք չստեղծեցին, իսկ մենք գոլ խփելու շատ պահեր ունեցանք: Երբ 11 մ նշակետից վրիպեց Մոնտոլիվոն, ինքս ինձ ասացի, որ պարտավոր եմ հետ մղել հնարավորինս շատ 11 մ հարվածներ, քանի որ տղաներն արժանի էին հաղթանակի: Չեմ մտածում բրոնզե կամ արծաթե մեդալի մասին: Այժմ հարկավոր է առաջ ընթանալ ու հաղթել: Ուրախանալու ժամանակ դեռ կունենանք: Այս հաղթանակը նվիրում եմ երկրաշարժից զոհվածների հիշատակին: Եվ մենք կշարունակենք խաղալ հանուն նրանց»:



Իսկ մարզիչները հետեւյալ կարծիքն են արտահայտել:

**Չեզարե Պրանդելի** (Իտալիա) - Մենք հիանալի խաղ անցկացրինք: Անգլիացիներին դարպասը գրավելու համար ոչ մի հնարավորություն չընձեռեցինք: Իսկ ինքներս գոլային պահեր ստեղծեցինք: Իհարկե, 11 մ հարվածաշարի ժամանակ մարզական բախտն անհրաժեշտություն է, սակայն հարկավոր է նաեւ ամուր նյարդեր ունենալ: Շնորհակալ եմ ֆուտբոլիստներից թիմային ոգու համար: Մեր հաջորդ մրցակիցը Գերմանիան է, որի մասին չեմ ուզում այժմ խոսել: Ավելի լավ է հաճույք ստանանք այս հաղթանակից:

**Ռոյ Հոջսոն** (Անգլիա) - Ֆուտբոլիստները ներդրեցին իրենց ողջ ուժերը, ֆանատներն էլ դա ըստ արժանվույն գնահատեցին: Հույս ունեի, որ այս անգամ 11 մ հարվածաշարի ժամանակ հաջողությունը կուղեկցի մեզ: Սակայն մարզումներն էլ չօգնեցին: Չեմ կարող պարտության համար հանդիմանել խաղացողներին, որոնք արդեն հոգնել էին: Իհարկե, իտալացիների վրիպումից հետո հույս ունեի, որ մենք կհաղթենք, քանի որ բոլոր ֆուտբոլիստներն էլ լավ են իրացնում 11 մ հարվածները: Սակայն սպասելիքները չարդարացան:



# Գեւորգ Ղարիբյանը Եվրոպայի չեմպիոն



**Զագրեբում ավարտվեց ըմբշամարտի Եվրոպայի երիտասարդական առաջնությունը: Ի տարբերություն ազատոճային ըմբիշների, Հայաստանի հունահռոմեական ոճի ըմբիշները միայն մեկ մեդալ նվաճեցին: Սակայն այդ մեդալը ոսկե էր: Իսկ ազատոճայինները նվաճել էին 2 արծաթե եւ 1 բրոնզե մեդալ:**

**Իրեն հիանալի դրսեւորեց 55 կգ քաշային Գեւորգ Ղարիբյանը՝ նվաճելով Եվրոպայի չեմպիոնի տիտղոսը: Գեւորգը հաջորդաբար հաղթելով հունգարացի Կնիպլիին, բելառուս Աիամաուին եւ ֆրանսիացի Օզային, մտավ եզրափակիչ: Վճռորոշ գոտեմարտում հայ ըմբիշն առավելության հասավ ադրբեջանցի Ղուլիեւի նկատմամբ ու հռչակվեց Եվրոպայի չեմպիոն:**

# Հայկական ակումբների մրցակիցները հայտնի են

**Երեկ Շվեյցարիայի Նիոն քաղաքում կայացավ ֆուտբոլի 2012/13-ի չեմպիոնների եւ Եվրոպայի լիգայի խաղարկությունների վիճակահանությունը, որը որոշեց այդ մրցաշարում հայկական ակումբների մրցակիցներին:**

**Հայաստանի չեմպիոն «Ուլիսին» չեմպիոնների լիգայի որակավորման 2-րդ փուլում բաժին է ընկել Մոլդովայի ուժեղագույն ակումբը՝ Տիրասպոլի «Շերիֆը»: Առաջին խաղում «Ուլիսը» հանդես կգա սեփական հարկի տակ: Խաղերը նշանակված են հուլիսի 17-18-ին եւ 24-25-ին:**

**Եվրոպայի լիգայի մրցաշարում «Շիրակի» եւ «Փյունիկի» մրցակիցները Չեռնոգորիայի թիմերն են: Հուլիսի 5-ին «Շիրակը» կհյուրընկալի «Ռուդարին», իսկ նույն օրը Երեւանում «Փյունիկը» կմրցի «Զետայի» հետ: Պատասխան խաղերը կկայանան հուլիսի 12-ին:**

**Ամենաթույլ մրցակիցը բաժին է հասել Կապանի «Գանձասարին», որը մրցելու է Ֆարերների «Տրեյմուրի» հետ: Առաջին խաղը կապանցիները կանցկացնեն մրցակցի դաշտում:**

# Դավիթ Հարությունյանն արժանացավ գլխավոր մրցանակին

**Ջերմուկում ավարտվեց Կարեն Ասրյանի շախմատի 5-րդ հուշամրցաշարը, որի մրցանակային ընդհանուր հիմնադրամը 18500 դոլար էր: Մրցաշարին մասնակցած 57 շախմատիստներից առավել հաջող հանդես եկավ վիրահայ Դավիթ Հարությունյանը: Նա 9 հնարավորից վաստակեց 7,5 միավոր եւ դարձավ մրցաշարի հաղթող՝ պարգեւատրվելով 4 հազար դոլարով: Ավարտական 3 տուրերում Վրաստանի ներկայացուցիչը վաստակեց 2 միավոր՝ հաղթելով Հրանտ Մելքումյանին, հաշտություն կնքելով Կոնստանտին Շանավայի եւ Ավետիք Գրիգորյանի հետ: Դավիթ Հարությունյանը մրցաշարում մնաց անպարտելի՝ տոնելով 6 հաղթանակ, 3 պարտիա ավարտելով ոչ-ոքի:**

**Հաղթողից 1 միավորով հետ մնացին Ավետիք Գրիգորյանը, Արտաշես Մինասյանն ու Լեւոն Բաբուջյանը: Հենց նշված հերթականությամբ էլ, հաշվի առնելով լրացուցիչ գործակիցները, շախմատիստները զբաղեցրին 2-4-րդ տեղերը՝ պարգեւատրվելով համապատասխանաբար 3000, 2500 եւ 1500 դոլարով: Փորձառու Արտաշես Մինասյանը, որ այնքան էլ հաջող չէր մեկնարկել, հիանալի անցկացրեց մրցաշարի վերջնագիծը: Նա 5-8-րդ տուրում 4 անընդմեջ հաղթանակ տոնեց Նորայր Թորոսյանի, Արման Հայրապետյանի, Սոպիկո Գուրամիշվիլու եւ Հովհաննես Գաբուզյանի նկատմամբ, իսկ ավարտական տուրում հաշտություն կնքեց Լեւոն Բաբուջյանի հետ: Մինասյանը մրցաշարում միայն մեկ պարտություն կրեց՝ 4-րդ տուրում զիջելով Տիգրան Ս. Պետրոսյանին:**

**Լեւոն Բաբուջյանն էլ հաջող խաղաց վերջնագծում՝ տոնելով 3 անընդմեջ հաղթանակ Աննա Մասնածեի, Ռոբերտ Աղասարյանի եւ Լիլիթ Մկրտչյանի նկատմամբ: Իսկ ավարտական տուրում նա ոչ-ոքի խաղաց Արտաշես Մինասյանի հետ: Բաբուջյանն էլ միայն մեկ անգամ պարտվեց՝ 5-րդ տուրում զիջելով վրացի Կոնստանտին Շանավային:**

**Իսկ ահա Ավետիք Գրիգորյանը մրցաշարն անցկացրեց առանց պարտության: Ավարտական 3 տուրերում նա հաղթեց Կոնստանտին Շանավային, հաշտություն կնքեց Սամվել Տեր-Սահակյանի եւ Դավիթ Հարությունյանի հետ:**

**Զավեն Անդրեասյանը 6 միավորով հանգրվանեց 9-րդ հորիզոնականում: 5,5 միավորով հաջորդ տեղում Հրանտ Մելքումյանն է: Համեմատաբար թույլ հանդես եկավ Լիլիթ Մկրտչյանը՝ 9 հնարավորից վաստակած 5 միավորով զբաղեցնելով 22-րդ տեղը: Մեր մյուս փորձառու գրոսմայստեր Եվգենիա Դոլուխանովան 3 միավորով 50-րդն էր: Իսկ մրցաշարի ամենատարեց մասնակից, միջազգային վարպետ Էդուարդ Մնացականյանը 4,5 միավորով գրավեց 33-րդ տեղը:**

# Մխիթարյանը զբաղեցրեց 6-րդ տեղը

**Չեխիայի Տեպլիցե քաղաքում ավարտվեց շախմատի միջազգային մրցաշարը, որի մասնակիցների թվում էր բրազիլացի գրոսմայստեր Գրիգոր-Սեւակ Մխիթարյանը: Նա 9 հնարավորից վաստակած 6,5 միավորով զբաղեցրեց 6-րդ տեղը: Մխիթարյանը գերազանց էր մեկնարկել՝ տոնելով 5 անընդմեջ հաղթանակ: Սակայն հաջորդ 2 տուրերում հետեւեցին 2 անընդմեջ պարտությունները Վլադիմիր Սերգեեւից եւ Լուկաս Չեռնոուսեկից: 8-րդ տուրում Մխիթարյանը հաշտություն կնքեց Ռադոսլավ Դոլեզալի հետ, իսկ ավարտական պարտիայում հաղթեց Կարոլինա Օլսարովային:**

**Մրցաշարի հաղթող ճանաչվեց Բրազիլիան ներկայացնող Ալեքսանդր Ֆիեռը, որը վաստակեց 8 միավոր: Ֆիեռը շատ հաջող խաղաց վերջնագծում՝ ավարտական 3 տուրերում վաստակելով 2,5 միավոր: Նա հաղթեց Վլադիմիր Սերգեեւին ու Դենես Բորոշին, ոչ-ոքի խաղաց Լուկաս Չեռնոուսեկի հետ: 7-ական միավորով 2-րդ եւ 3-րդ տեղերը զբաղեցրին Վադիմ Շիշկինն ու Լուկաս Չեռնոուսեկը:**

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

